Риски инвестирования в кластерные проекты довольно высоки, т.к. страна не располагает большим количеством финансовых, интеллектуальных или материальных ресурсов. С учетом того, что при формировании кластеров МСП в Армении задействование большого количества участников, и привлечение крупных инвестиций невозможно, следует, в первую очередь, определиться с отраслью, формирование кластеров в которой позволит увеличить уровень доходов страны, а также будет способствовать открытию рабочих мест. Необходимо учесть, что цель создания кластеров должна быть как перспективной, так и реально достижимой, т.к. важным правилом кластеризации является определение и дальнейшее развитие детерминант конкурентоспособности государств, где они располагаются. Базируясь на проведенном анализе международного передового опыта кластеризации малых и средних предприятий, можно сделать вывод, что в XXI наиболее конкурентоспособными являются именно те страны, которые создают кластеры с учетом кросс-секторальных взаимосвязей между их членами. В частности, наибольшую актуальность приобретают кластерные

---

<sup>3</sup> В сложившихся экономических реалиях РА наиболее целесообразным можно считать подход «сверху вниз» к формированию кластеров МСП.

модели, в которых комбинируются: цифровые технологии и сельское хозяйство, ИКТ и виноделие, ИКТ и рекреационный туризм. Так, перспективным будет формирование инновационных кластеров малых и средних предприятий в РА с учетом того, что данные кластеры будут объединять компании из разных секторов.

Как было отмечено выше, с учетом возможностей государственного бюджета, в Республике Армения нет надлежащих финансовых средств для того, чтобы нанимать специалистов извне. В этой связи ответственность и риски по имплементации кластерных проектов возлагаются на местные кадры. Формирование кластера не будет иметь смысла в случае отсутствия надлежащих квалификаций и знаний для создания инновационных продуктов. Так, необходимо увеличить государственные расходы на повышение квалификации армянских работников<sup>4</sup>.

Учитывая относительно высокий уровень профессиональной подготовки ИКТ-специалистов Армении, а также общую результативность деятельности предприятий в области информационных технологий, перспективным для государства будет создание условия для формирования ИКТ-кластеров<sup>5</sup>. Инициативу по созданию кластеров и дальнейшее управление ими должно взять на себя именно государство.

Проблема подхода «снизу вверх» к кластеризации бизнеса в Армении заключается в том, что в случаях, когда инициативу по реализации кластерных проектов берет на себя частный сектор в лице местных МСП, возникают риски, связанные с их неспособностью достигать поставленных целей по формированию кластеров еще на стадии проектного планирования. Примером может служить попытка открытия инновационного кластера информационных технологий “Creative City”, который должен был стать сильнейшим центром ИТ в Азии. Было также запланировано создание потенциальных участников кластера, включая: НИУ, ИТ-инкубатор, “IT Congress Hall”, стартап-комплексы.

Планировалось, что участники “Creative City” будут играть роль создателей предпринимательского инновационного климата, который станет катализатором разработки прорывных стартапов и позволит популяризировать Армению как страну-поставщика инновационных продуктов в сфере

---

<sup>4</sup> В частности, на улучшение цифровой грамотности, совершенствование управленческих и технических навыков.

<sup>5</sup> Или кластеров, объединяющих ИКТ с несмежными направлениями.

ИТ. Несмотря на большие перспективы, проект “Creative City” оказался довольно рискованным: чрезмерно крупный объем инвестиций, требуемый для реализации проекта, поступившего по инициативе частного сектора, привел к ситуации, когда проект, который всецело зависел от вложений со стороны предприятий, стал финансово «привязанным» к бюджету компаний из предполагаемого кластерного ядра. В связи с тем, что одна из задач создания кластера заключалась в идее формирования межрегиональной агломерационной структуры, одним из главных спонсоров проекта выступил предприниматель из РФ, однако фактически не было предпринято практических шагов по созданию ИТ-кластера.

### **Заключение**

По результатам исследования было выявлено, что преобладание малых и средних предприятий на рынке РА делает возможным более гибкое реагирование на изменения, происходящие в рыночной конъюнктуре, а также развитие и адаптацию компаний к условиям и тенденциям, возникающим на глобальных рынках. В условиях реалий был предложен ряд практических рекомендаций для компаний по принятию вызовов цифровой эры и адаптации к цифровому формату.

Путь к цифровой трансформации необходимо начинать с наиболее базовых процессов, а именно: с обеспечения оцифровки систем документооборота компаний, цифровизации бизнес-процессов и последующей цифровой трансформации путем перестройки бизнес-моделей, применения цифровых способов взаимодействия с рынком, формирования системы управления большими данными и перестройки корпоративной культуры. Необходимо отказаться от традиционных принципов управления, провозгласив революционно новые.

Принимая во внимание выявленный потенциал армянского рынка, для принятия вызовов цифровой эры перспективным является формирование инновационных кластеров МСП в регионах страны. С учетом имеющихся в Армении попыток кластеризации бизнеса, необходимо создать инновационные кластеры посредством применения подхода «сверху вниз», при котором преимущественная доля финансовой и прочей ответственности за реализацию кластерной политики будет лежать на государстве. Перспективным будет создать кросс-секторальные кластеры (объединением ИКТ и агропромышленности или ИКТ и биотехнологий).

Результаты проведенного исследования могут служить в качестве основы формирования плана действий по принятию вызовов цифровой эры в Армении.

### ЛИТЕРАТУРА

1. Datareportal. URL: <https://datareportal.com/reports/digital-2022-armenia>
2. The Global Cybersecurity Index, 2020. ITU. URL: [https://www.itu.int/dms\\_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf](https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf) С. 26; 30; 116.
3. Rajagohar, S. Internet use in Armenia: How do individuals and businesses use the internet to access opportunities? May 01, 2021 / World Bank Blogs. URL:
4. <https://blogs.worldbank.org/europeandcentralasia/internet-use-armenia-how-do-individuals-and-businesses-use-internet-access>
5. Digital Adoption Index, 2019. World Bank. URL:
6. <https://thedocs.worldbank.org/en/doc/587221475074960682-0050022016/original/WDR16BPDAImethodology.pdf>
7. Honorati, M. Work for a better future in Armenia. An analysis of jobs dynamics, 2019. World Bank. URL: <https://documents1.worldbank.org/curated/en/387401564380250-230/pdf> С.72
8. [Work-for-a-Better-Future-in-Armenia-An-Analysis-of-Jobs-Dynamics.pdf](#)
9. Digital Literacy in the times of the COVID-19 in the Eastern Partnership Countries, 2021. Edited by Tinatin Akhvediani. URL: <https://eap-csf.eu/wp-content/uploads/Digital-Literacyin-times-of-the-Covid-19-in-the-Eastern-Partnership-Countries.pdf>
10. Официальный сайт Национальной Статистической Службы РА: <https://www.armstat.am/ru/>
11. Caucasus Barometer. URL: <https://caucasusbarometer.org/en/>
12. E-Government Development Index, 2020. United Nations. URL: [https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey2020%20UN%20E-Government%20Survey%20\(Full%20Report\).pdf](https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey2020%20UN%20E-Government%20Survey%20(Full%20Report).pdf)
13. E-Government Survey, 2020. United Nations. URL:
14. [https://www.redgealc.org/site/assets/files/12071/2020\\_un\\_egovernment\\_survey\\_full\\_report.pdf](https://www.redgealc.org/site/assets/files/12071/2020_un_egovernment_survey_full_report.pdf)
15. The RA Prime Minister's Decree N 650-L, dated May 16, 2019, on Approving the RA Government's 2019-2023 Action Program. URL: <https://www.arlis.am/Document-View.aspx?DocID=131287>
16. Суварян. А., Манукян И. Проблема анализа региональных кластерных моделей и их перехода к инновационным экосистемам // "KSEM-Conf-2021": Сборник трудов V Всероссийской (национальной) научно-практической конференции с международным участием. Краснодар, 2021, 28.05-29.05. URL: <https://www.elibrary.ru/item.asp?id=46402689>. СС. 51–59.

**FROM DIGITAL TRANSFORMATION TO REGIONAL SME'S  
CLUSTERING WITH AN EMPHASIS ON INNOVATION IN  
THE REPUBLIC OF ARMENIA**

*I. Manukyan*

**ABSTRACT**

Considering the repercussions of the pandemic outbreak, as well as taking into account current tendencies of the scientific and technological progress, countries are facing the emergence of a new digital reality. In this context the Republic of Armenia is not an exception. In the conditions of contemporary economic realities and fierce market competition, Armenia needs to accept the challenge of the time and to embark on the path towards digital transformation at the earliest opportunity. The following article encompasses the analysis of Armenia's potential for digital transformation at micro and macro levels along with a number of practical recommendations for business and public sectors to foster the country's adaptation to the challenges of digital era, including digital transformation and regional SME's clustering with an emphasis on innovation.

**Keywords:** digital transformation of business; challenges of the digital era; innovation clusters; state regulation of economy; cluster approach to SME's development.

# СОЦИОЛОГИЯ

DOI 10.48200/1829-0450\_sh\_2022\_4\_78

УДК 316

Поступила: 06.04.2022г.

Сдана на рецензию: 15.04.2022г.

Подписана к печати: 25.12.2022г.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԻՖՈԼՈԳԵՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԻԼԻՏԱՐԻՍԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀՈՒՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Ա. Մ. Համբարձումյան, Գ. Մ. Հարությունյան*

*Երևանի պետական համալսարան*

*gayane.harutyunyan@gmail.com*

*arevikham@gmail.com*

### ԱՄՓՈՓՈՒՄ

Արդյունաբերական հասարակությունների փոխակերպումը, ինչպես նաև երկու Համաշխարհային պատերազմների ծանր հետևանքները տարբեր հասարակությունների վրա մեծագույն սոցիալական բարիք հռչակեցին խաղաղությունը: Այս հանգամանքների, ինչպես նաև մի շարք այլ գործոնների՝ հաղորդակցությունների բնույթի փոփոխություն, գլոբալիզացիա, կյանքի որակի բարելավում, ազդեցությամբ պայմանավորված սկսվեց մի գործընթաց՝ պատերազմների և առհասարակ ռազմական ոլորտին վերաբերող հարցերը խնդրականացում և քննում հասարակության կողմից: Եթե նախկինում պետությունների ռազմական դոկտրինն առաջնահերթ էր և պայմանավորում էր պետության մնացած ոլորտների գործունեությունը, ապա հետարդյունաբերական հասարակություններում այս իրողությունը փոխվեց՝ զիջելով առաջնահերթությունը կյանքի որակը պայմանավորող գործոններին: Թերևս, առաջնահերթությունների փոփոխությանը զուգահեռ ռազմական սպառնալիքը որոշ պետությունների համար չփոխվեց: Արդյունքում հասարակությունները այլևս չէին ցանկանում պատերազմել, բայց պետությունները ստիպված էին ապահովել իրենց քաղաքացիների

անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը՝ երբեմն դիմելով պատերազմական գործողությունների: Ստեղծված սոցիալական կոնֆլիկտը հաղթահարելու այլընտրանքային սոցիալական մեխանիզմներից են հակամիլիտարիստական սոցիալական շարժումները, որոնց նպատակներից մեկը քաղաքացիների կամքի արտահայտելն է պատերազմական օրակարգի դեմ:

Հայաստանյան հակամիլիտարիստական շարժումների առաջացումը կապված է այն հանգամանքի հետ, որ ՀՀ-ն վերջին մի քանի տասնամյակներում գտնվել է մշտական ռազմական սպառնալիքի ներքո: Չնայած որ բանակի և հասարակության շփումը միշտ սերտ է եղել, իսկ բանակի ինստիտուտի կշիռն ու կարևորությունը՝ միշտ զգալի, ժամանակակից միտումները, որոնք առաջնահերթ են համարում խաղաղությունը, ներթափանցել են նաև Հայաստան՝ ստեղծելով նոր սոցիալական կոնֆլիկտ: Այս կոնֆլիկտը դրսևորվում է մի կողմից պատերազմել չցանկացող քաղաքացիների հայացքների և մյուս կողմից պետության կողմից ձեռնարկվող միջոցների տեսքով, որոնք կոչված են զսպել Ադրբեյջանի հնարավոր ռազմական ագրեսիան: Սոցիալական կոնֆլիկտի դրսևորման եղանակներից մեկը հայկական հակամիլիտարիստական շարժումն է, որի դիսկուրսի տարածման միջոցներից մեկը հայկական բանակի մասին միֆոլոգեմներն են:

Մույն հոդվածի նպատակն է վերլուծել և հասկանալ, թե հայկական բանակի ինչպիսի կերպար է կառուցակցվում հայկական հակամիլիտարիստական շարժումն իր հռետորաբանությամբ՝ միֆոլոգեմների օգնությամբ:

**Հիմնաբառեր**՝ սոցիալական շարժում, հակամիլիտարիստական շարժում, սոցիալական կոնֆլիկտ, միֆոլոգեմ, դիսկուրս վերլուծություն:

Եվրոպական երկրներում 18-րդ դարի երկրորդ կեսի արդյունաբերական հեղափոխությունը վերափոխեց ոչ միայն տնտեսական համակարգը, այլև հասարակական հարաբերությունները: Պրոլետարիատի և բուրժուական դասակարգի պայքարի ավարտը, ինչպես նաև տնտեսու-

թյան զարգացման տեմպերի արագացումը, ձևավորեցին նոր տիպի սոցիալական իրականություն: Աշխատանքի մեքենայացումը և դրա հետևանքով աշխատատեղերի կրճատումը, աշխատանքային հարաբերությունների փոփոխությունը հանգեցրեց մասշտաբային սոցիալական կոնֆլիկտների առաջացմանը, որոնք էլ իրենց հերթին բերեցին լայն զանգվածների խռովությունների՝ հանուն իրենց շահերի պաշտպանության: Նման օրինակներից է Լուդդիտների ապստամբությունները Անգլիայում: Վերջինս աշխատավորների առաջին տարերային ապստամբությունն էր ուղղված տեքստիլի ֆաբրիկաների դեմ՝ կարի մեքենաների տեղադրման պատճառով, ինչի արդյունքում դերձակները դարձան գործազուրկ: Ավելի ուշ՝ Բելգիական ապստամբության հիմքում, նույնպես, ընկած էր տեքստիլի ֆաբրիկաների ոչնչացումն: Այս ապստամբություններն ընդունված է դիտարկել իբրև առաջին սոցիալական շարժումների դրսևորումն օրինակներ:

Սույն հոդվածի շրջանակներում «սոցիալական շարժում» տերմինը մեկնաբանելիս օգտագործելու ենք Նեյլ Սմելգերի առավել ընդունված սահմանումը՝ սոցիալական շարժումը կազմակերպված կոլեկտիվ ջանքեր են, որոնք նպաստում կամ խոչընդոտում են սոցիալական փոփոխությունների իրականացմանը [1]: Սահմանման կարևորությունը այս աշխատանքի տեսանկյունից կարելի է տեսնել հետևյալ երկու հատկանիշներում, որոնք ընդգծում է հեղինակը: Առաջինը սոցիալական շարժումը դիտարկվում է իբրև կազմակերպված կոլեկտիվ գործողության տեսակ, ինչը մատնանշում է, որ սոցիալական շարժումն ունի կառուցվածք, և առաջանում է ինստիտուցիոնալ մարտահրավերների արդյունքում. և երկրորդը՝ որ սոցիալական շարժումն ունի հստակ նպատակ՝ կանգնեցնել ոչ ցանկալի սոցիալական փոփոխությունները: Այդ պատճառով էլ սոցիալական շարժումները հաճախ գրականության մեջ անվանում են փոփոխության ազենտներ [2]:

1960-ականներին, հետարդյունաբերական հասարակություններում, սոցիալական կոնֆլիկտների պատճառը վերափոխվեց: Այլևս կոնֆլիկտի հիմքում ոչ թե տնտեսական արժեքն էր ինչպես նախկինում,



այլև մարդու իրավունքները, բնապահպանությունը, քաղաքային միջավայրի պաշտպանությունը, պացիֆիզմը այլն: Այլ կերպ ասած՝ արդյունաբերական հեղափոխությունն ամբողջ աշխարհում իր հետ բերեց արժեքային համակարգի փոփոխություն. արդյունաբերական հասարակությունները, որոնք հասարակագիտական մտքում մեկնաբանվում էին որպես ռազմական հասարակություններ [3], որտեղ պետության ռազմական բաղադրիչը գերակա և առաջնահերթ էր, փոխարինվեցին կյանքի որակի ապահովման հասարակություններով: Սառը պատերազմի ավարտը շարունակեց այս դիսկուրսը՝ դիտարկելով 21-րդ դարն իբրև անցյալի գերռազմականացված հասարակությունների ավարտ և խաղաղ զարգացման ժամանակաշրջանի սկիզբ [4]: Բայց, Սառը պատերազմի ավարտին հաջորդեցին բազմաթիվ նոր առաջացած էթնոքաղաքական կոնֆլիկտներ՝ պատերազմներ հետխորհրդային տարածքում, Մերձավոր Արևելքում, նախկին Հարավսլավիայի մաս կազմող հանրապետություններում: Այդպես պատերազմների կանխարգելումը և խաղաղության նվաճումը դարձան միջազգային և լոկալ հանրությունների կարևոր նպատակներից:

Ստեղծված իրավիճակը, երբ հասարակություններն այլևս չեն ցանկանում պատերազմել, բայց պետությունները դեռ շարունակում են կոնֆլիկտների կարգավորումը տեսնել ռազմական ուժի կիրառման մեջ, առաջացրեց նոր սոցիալական հիմնախնդիրներ, որոնց արձագանքել հնարավոր էր միայն կոլեկտիվ ջանքերի միջոցով: Այսպես, նոր<sup>1</sup> սոցիալական շարժումները դարձան սոցիալական իրականությունում ձևավորվող կոնֆլիկտների կարգավորման և սոցիալական փոփոխությունների ապահովման մեխանիզմ:

### **Հակամիլիտարիստական շարժումներն իբրև նոր սոցիալական շարժումների տեսակ**

---

<sup>1</sup> Սոցիալական շարժումների տիպաբանությունը «հնի» և «նորի» կարելի է տեսնել սոցիալական փոփոխությունները հետազոտող բազմաթիվ հեղինակների մոտ:

Նոր սոցիալական շարժումները լավ ուսումնասիրված են գրականության մեջ. Յուրգեն Համբերմասը իր աշխատանքներում գրում էր, որ նոր սոցիալական շարժումներն առաջանում են նոր տիպի կոնֆլիկտների պատճառով և իրան են հաղիսանում կոմունիկատիվ գործողությունների համար՝ պաշտպանելով կենսաշխարհը գաղութացումից, վերականգնելով և ձևավորելով նոր տարածություններ կոմունիկատիվ գործողության համար [5]: Ալբերտո Մելուչին «հին» և «նոր» շարժումների տարբերակման հիմքը նույնպես տեսնում էր տնտեսական և ոչ տնտեսական շարժառիթներում, և շարժումը իրացնող՝ բանվոր և միջին դասի մասնակիցների մեջ: Ըստ նրա՝ «նոր» շարժումները հիմնված են ոչ բանվոր դասակարգի գործողությունների վրա և ունեն մեծապես ոչ տնտեսական մոտիվներ: Ալան Տուրենը գրում էր, որ «նոր» սոցիալական շարժումները՝ հանդիսանալով «նոր» սոցիալական համակարգի սոցիալական փոփոխություններին ուղղված արձագանք, առաջնահերթություն է տալիս այլ տիպի արժեքներին՝ առաջացնելով «նոր» տիպի կոնֆլիկտներ [6]: Դոնատելլա Դելլա Պորտեն և Մարիո Դիանին «Սոցիալական շարժումների ուսումնասիրման ներածություն» գրքում սահմանում են «նոր» շարժումները իբրև շարժումներ, որոնց շարժող ուժը ոչ թե աշխատավոր՝ բանվոր դասակարգի<sup>2</sup>, ներկայացուցիչներն են այլ միջին դասի ինտելիգենցիան է, ում գործողությունների արժեքային կորիզը աշխատանքային դասի տնտեսական շարժառիթներից տարբեր շարժառիթներ և այլ արժեքներ [7]: Այսպես, առաջնահերթություն տալով խաղաղությանը և մերժելով սոցիալական բռնությունը՝ սկսեցին ձևավորվել հակամիլիտարիստական շարժումները՝ իբրև նոր սոցիալական շարժումների տեսակ:

<sup>2</sup> Հեղինակների այս սահմանումը, համաձայն որի սոցիալական շարժման տիպը պայմանավորվում է նրա մասնակիցներով՝ աշխատավոր կամ միջին դասի ինտելիգենցիայով, մեզ նորից տանում է դեպի դասակարգային պայքարի տեսություն և տնտեսական հիմքով առաջացած առաջին սոցիալական շարժումներ:

Հակամիլիտարիստական շարժումները ձևավորվում են խաղաղության և ոչ բռնության արժեքների շուրջ՝ վերջնական նպատակ ունենալով հասնել պետությունների ապառազմականացմանը [8]: Ամբողջ աշխարհում հակամիլիտարիստական շարժումները ձևավորվում են պատերազմի վտանգի առաջացման դեպքում կամ էլ պատերազմի ընթացքում, երբեմն էլ՝ պատերազմից հետո, հատկապես, երբ երկիրը պարտվում է պատերազմում: Հակամիլիտարիստական շարժումների մեծամասնությունը ծագում են կոնկրետ պատերազմի դեմ պայքարելու անհրաժեշտությունից: Միայն որոշ հակամիլիտարիստական շարժումներն ավելի գլոբալ նպատակներ են առաջ քաշում, օրինակ նպաստել գերտերությունների ապառազմականացմանը, ձևավորել միջազգային բանակցային համակարգ կամ փոխել միջազգային օրենքները և այլն: Այս պարագայում շարժումը ավելի մեծ մասշտաբի խնդիր է դնում իր առջև, ինչն էլ նվազեցնում է հաջողության հասնելու հավանականությունը. ավելի իրատեսական է ունենալ մեկ օրակարգ և պայքարել հրստակ տեղայնացված պատերազմի դեմ մեկ պետությունում, քան փորձել փոփոխություններ առաջացնել տարբեր երկրների իրավական համակարգերում և ունենալ իրական արդյունք: Այս շարժումները հաճախ հարցականի տակ են առնում նաև քաղաքական իշխանության բաշխումն, ինչի հետևանքով պահանջում են քաղաքական վերնախավի հրաժարական, ինչը նույնպես ժամանակ անց հանգեցնում է շարժման անկման [9]: Հակամիլիտարիստական քարոզչությունն ունի նաև մեկ այլ՝ խիստ վտանգավոր նպատակ՝ հավանական հակառակորդի մոտ թուլացնել պատերազմելու, պայքարելու ցանկությունը: Այսպիսով, հակամիլիտարիստական շարժումները, լինելով սոցիալական շարժման տեսակ, հանդիսանում են այնպիսի կոլեկտիվ գործողություններ, որոնք հիմնված են ռազմական կոնֆլիկտի դադարեցման, ուժային կառույցների վերակազմավորման գաղափարի վրա և նպատակ ունեն փոխել հասարակության վերաբերմունքը ռազմական ինստիտուտների և դրանց ֆունկցիաների հանդեպ:

Հակամիլիտարիստական շարժումների զարգացման մի քանի պատմական փուլ կարելի է առանձնացնել: Դրանք են [10].

### **1. Խաղաղության վաղ/սկզբնական ջանքերը**

1815-ից սկսած Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում սկսում են ձևավորվել առաջին հակամիլիտարիստական միությունները, որոնց առաջացումը պայմանավորված էր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև 1812-1814թթ.-ի պատերազմի հետևանքներով: Երկու երկրներում ձևավորված տարբեր միությունները նպատակ են հետապնդում մատնանշել պատերազմի ազդեցությունն իրենց հասարակության վրա, քարոզել խաղաղության ճանապարհով կոնֆլիկտների լուծման առավելությունները, երկրների երկկողմանի ապառազմականացումը, արբիտրաժի սկզբունքների որդեգրումը [11]: Նման միությունների ամենահայտնի օրինակներն են ԱՄՆ-ում Նյու-Յորքի խաղաղության միությունն էր, իսկ Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնի խաղաղության միությունը:

### **2. Երկրորդ Համաշխարհային պատերազմին հաջորդող և Սառը պատերազմի ժամանակահատվածը**

Այս ժամանակահատվածում միջազգային հանրությունը զգալով Երկրորդ համաշխարհային պատերազմների հետևանքները, համախրմբեց իր ջանքերը պատերազմները կանխարգելելու հարցում և ստեղծեց ՄԱԿ-ը, որն էլ հենց պետք է ուղղված լիներ միջազգային խաղաղության հաստատմանը:

### **3. Նոր խաղաղության շարժումներ (1960-1970-ականներից սկսած)**

Այս փուլի ամենաուշագրավ շարժումը ԱՄՆ-ում սկիզբ առած շարժումն էր, որը նպատակ ուներ դադարեցնել Վիետնամի պատերազմը:

### **4. Հետսառըպատերազմյան շրջանի շարժումներ**

Խորհրդային միության փլուզմամբ, որն էլ Սառը պատերազմի ավարտի խորհրդանիշն էր, հետխորհրդային տարածքում, Մերձավոր Արևելքում և Հարավսլավիայում առաջացավ տևական անկայունության շրջան, նոր էթնոքաղաքական զինված կոնֆլիկտներ, որոնց կանխարգելման, լուծման կամ տրանսֆորմացիայի նպատակով ստեղծվեցին նոր հակամիլիտարիստական մոտեցումներ՝ իրենց յուրահատուկ գործիքակազմերով, որոնցից մեկը հակամիլիտարիստական շարժումներն էին: ՀՀ-ում սկիզբ առած հակամիլիտարիստական շարժումը

դրանցից մեկն էր: Այն ձևավորվել է Արցախյան պատերազմի համատեքստում, որն էլ իր հերթին հետսառքպատերազմյան աշխարհաքաղաքական իրավիճակի դիսկորումներից էր:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել հայաստանյան հակամիլիտարիստական շարժումների հռետորաբանության միջոցով կառուցակցվող հայկական բանակի միֆոլոգներ: Բանակի միֆոլոգներ ասելով այս կոնտեքստում նկատի ունենք սուբյեկտիվ դատողությունների ամբողջություն, որը նպատակ ունի նկարագրել բանակի ամբողջական կերպարը՝ հիմնվելով կարծրատիպային պատկերացումների վրա: Այս տեսանկյունից միֆոլոգները հանդիսանում է սոցիալ-պատմական իրականության ներկայացման միջոց, որը անխուսափելիորեն ներառում է այն կառուցակցող հանրույթի պատկերացումները և արժեքները, որոնք ներկայացնում են իրականությունը մասամբ ձևափոխված՝ համապատասխան միֆերի տրամաբանության: Այդ պատճառով միֆոլոգները կարող է ներկայացնել ինչպես իրականությանը համապատասխանող փաստեր, այնպես էլ իրականությունից տարբերվող՝ շեղված դեպի դրական կամ բացասական կողմ: Միֆոլոգների ֆունկցիոնալ նշանակությունը կայանում է նրանում, որ վերջինս կառուցակցում է իր առանցքների շուրջ երևույթի ամբողջական կերպարը, որի հիման վրա և ձևավորվում է հանրային հաղորդակցությունը [12]:

Նշված հետազոտական թեման արդիական է առավել քան երբեք, քանի որ ՀՀ-ն գտնվում է ոչ միայն սառած, այլ նաև ակտիվ պատերազմական իրավիճակում: Ուստի ոչ միայն տեսական, այլև կիրառական նշանակություն ունի 2010-ականներից նկատելի դարձած հակամիլիտարիստական գաղափարների ուսումնասիրությունը, որոնք ամբողջության մեջ կառուցակցում են հայակական բանակի կերպարի մի ասպեկտ: Այս հարցերի վերաբերյալ պատկերացում կազմելու համար, նախ անհրաժեշտ է հասկանալ՝ ինչու և ինչպես են առաջանում հակամիլիտարիստական շարժումները:

Այս շարժումների առաջացման հիմնական պատճառներն են՝

- **Ռազմական սպառնալիքի բնույթի փոփոխություն**

Ժամանակակից աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, շատ է շահարկվում «չէ՞ որ արդեն 21-րդ դարն է, ո՞վ պետք է հարձակվի մեր երկրի վրա» կարծրատիպը, որն աշխարհը ներկայացնում է զարգացած և զերծ պատերազմներից: Ու չնայած համաշխարհային ժամանակակից պատմությունը լի է մեր օրյա ռազմական կոնֆլիկտներով, բախումներով և պատերազմներով, բայց այս կարծրատիպը շարունակում է գոյություն ունենալ՝ ստեղծելով իրականության մասին թյուր կարծիք: Արդյունքում հասարակության լայն շերտերի շրջանակում տարածվում է այն պատկերացումը, որ աշխարհում այլևս հնարավոր չէ սկսել զավթողական պատերազմներ: Մինչդեռ կարելի է բազմաթիվ պատերազմների ականտես լինել այսօր: Փոխարենը սպառնալիք սկսեց ընկալվել համաշխարհային աղտոտումը, զլոբալ տաքացումը, առօրյա պատահարները, օրինակ՝ ավտովթարները, համավարակները, ահաբեկչությունը, թմրադեղերը և այլն [13]: «Խաղաղության» դարաշրջանի հաստատումը, պատերազմների «ավարտի» դիսկուրսի, ինչպես նաև այլ սպառնալիքների մասին դիսկուրսի գերակա դառնալը ստիպում է հասարակության անդամներին միավորվել հակամիլիտարիստական շարժումների շուրջ՝ չդիտարկելով ռազմական սպառնալիքը իբրև իրական: Այստեղ տեղին է հիշատակել Ու. Թոմասի թեորեմը. «Եթե մարդիկ սահմանում են իրավիճակը որպես իրական, նշանակում է, որ այն կլինի իրական նաև իր հետևանքների մեջ»: Թեորեմի առաջին մասը հիշեցնում է այն, որ մարդիկ արձագանքում են ոչ միայն իրավիճակի օբյեկտիվ հատկանիշներին, այլ նաև իմաստներին, որոնք այդ իրավիճակը ունի իրենց համար: Իսկ, երբ նրանք իմաստներ են վերագրում իրավիճակին, նրանց հետագա գործողությունները կանխորոշված են լինում այդ իմաստներով [14]:

- **Հասարակությունների ժողովրդավարացում**

Ընտրական մեխանիզմները ժամանակակից հասարակություններում թույլ տվեցին լայն մասսաներին մասնակցել երկրի կառավարման գործընթացներում: Սոցիալական շարժումները այս կոնտեքստում հասարակություն-պետություն կոնֆլիկտի արդյունք են: Սոցիալական շարժումների միջոցով հանրությունը ևս մեկ անգամ արտահայտում է

իր կամքը՝ անհամաձայնությունը պետական որոշումների և պետական քաղաքականության հետ: Մյուս կողմից, համաձայն պոստմոդեռնի հասարակություններին վերագրվող ընդհանուր կարծիքի՝ «ժողովրդավարությունները չեն պատերազմում», այլ փնտրում են կոնֆլիկտի կարգավորման այլընտրանքային միջոցներ:

- **Քաղաքացիական հասարակության ձևավորում և հաշվետվողականություն**

Մասնակցային ժողովրդավարության կառավարման մոդելի տարածումը, որը լայն իմաստով ենթադրում է հասարակության կարիքների և պետության որոշումների փոխադարձ ընդունում և հաշվետվողականություն, նպաստում է հասարակական կյանքի կառավարման հանդեպ քննական ընկալման ձևավորմանը [15]: Եթե նախկինում կառավարման մոդելները չէին ենթադրում հասարակության լայն շերտերի համաձայնությունը պետության որոշումների հետ, այդ թվում՝ պատերազմի և դրա վրա ծախսվող գումարների հետ, ապա պոստմոդեռնի քաղաքացին ցուցադրում է իր ակտիվ դիրքորոշումը և անհամաձայնությունը երկրի միջոցները պատերազմի վրա ծախսել, եթե այն անմիջապես չի գտնվում իր սահմանների մոտ: Քննադատական մտածողության աճին զուգահեռ ձևավորվող քաղաքացիական հասարակությունը պարտադրում է կառավարությանը հաշվետու լինել ռազմական և այլ ոլորտների բյուջեն պլանավորելիս [16]:

- **Կյանքի որակի գերակայություն**

Կյանքի որակի բարելավման առաջնահերթության հետ մեկտեղ տեխնոլոգիապես զարգացած հասարակությունները հարց են տալիս՝ ինչո՞ւ չեն սեփական կյանքը հանուն պատերազմների, որոնք կամ անհրաժեշտ չեն, հաճախ, նույնիսկ, իրենց երկրի սահմաններում չեն, մինչդեռ իրենք կարող են ունենալ հետաքրքիր և երջանիկ կյանք: Սպառողական հասարակությունների անդամները նախընտրում են վայելել կյանքի հաճույքները, ոչ թե պատերազմել, անցնել պարտադիր զինվորական ծառայություն և վճարել հավելյալ հարկեր բանակի և սպառողականության գնման համար:

- **Պատերազմի ռացիոնալության քննում**

Հասարակության զարգացման գուգահեռ լայն խմբերը սկսում են քննության առնել, թե որքանով է արդարացված նոր պատերազմի հրահրումը, ինչ կտա այն իրենց, որքանով է հավանական հաղթանակը, ինչ է սպասվում պարտության դեպքում: Հակամիլիտարիստական շարժման առաջացման նման օրինակ է Վիետնամի պատերազմի ժամանակ ԱՄՆ-ում առաջին մեծամաշտաբ շարժման ձևավորումը: Հյուսիսային Վիետնամի ուժեղացումը և այնտեղ ամերիկյան նոր ուժերի կուտակման անհրաժեշտությունը լայն մասսաների դժգոհության ալիք դարձավ: Խաղաղասիրական կոչերով բողոքի ակցիաները, անհնագանդության միջոցառումները և հակամիլիտարիստական լոբբինգը ուղեկցում էր ԱՄՆ-ն ողջ պատերազմի ընթացքում, ի վերջո, ստիպելով կառավարությանը կամաց-կանաց պակասեցնել ամերիկացիների ներգրավվածությունը կոնֆլիկտում:

- **Արժեքների գլոբալիզացիա**

Գլոբալիզացիոն գործընթացները, ինչպես նաև կոմունիկացիաների մեծացող հնարավորությունները նպաստեցին խաղաղությունը որպես հասարակական բարիքի և գերարժեքի ինտեգրմանը տարբեր հասարակությունների, այդ թվում նաև հայկական հասարակության արժեհամակարգում:

Թվարկված բոլոր պատճառները նպաստեցին ոչ միայն հակամիլիտարիստական շարժումների առաջացմանը, այլ նաև ռազմական ոլորտի խնդիրների և լուծումների գլոբալացմանը: Մի կողմից, հասարակության որոշ շերտեր ձևավորում են չպատերազմելու, բանակ չունենալու, զինվորական պարտադիր ծառայություն չանցնելու պահանջ՝ պայմանավորված համընդհանուր միջազգային միտումներով, մյուս կողմից՝ պետությունը ստիպված է ապահովել իր քաղաքացիների ֆիզիկական անվտանգությունը, սառած կամ ակտիվ ռազմական կոնֆլիկտի դեպքում: Ստեղծված կոնֆլիկտային իրավիճակի մաս կազմող հակամիլիտարիստական շարժումները իրենց տեսլականի համաձայն կառուցակցում են նոր իրականություն տարբեր միջոցների միջոցով, որոնք պետք է կողմնորոշեն շարքային քաղաքացուն կատարել



ծանրակշիռ ընտրություն՝ ընդունել միջազգային արժեքները թե հետևել սեփական պետության առաջնահերթություններին:

Հայաստանյան հակամիլիտարիստական շարժումը ևս բացառություն չի: Ըստ, այդմ՝ փորձենք հասկանալ հայաստանյան իրականությունում ինչպիսի դիսկուրս է ձևավորում հակամիլիտարիստական շարժումը՝ օգտագործելով հայկական բանակի միֆոլոգները: Սույն հոդվածում առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները՝

- պարզել՝ ինչպիսին է հայկական բանակի կերպարն ընդհանուր առմամբ շարժման հռետորաբանության կոնտեքստում,
- պարզել՝ հայկական բանակի որ ասպեկտներն են առավել հաճախ շոշափվում շարժման հռետորաբանությունում,
- բացահայտել՝ ինչ համատեքստում և ինչ միֆոլոգեմների միջոցով է կառուցակցվում հայկական բանակի կերպարը:

Սույն հոդվածի հետազոտական վարկածն այն է, որ հայկական հակամիլիտարիստական շարժումների հռետորաբանությունը և դրանց արդյունքում ձևավորվող միֆոլոգեմն ունի հիմնականում բացասական համատեքստ և ձևավորում է բանակի բացասական կերպար:

Այս նպատակին հասնելու համար ընտրվել են երեք առավել ակտիվ, ոչ ֆորմալ հակամիլիտարիստական նախաձեռնությունները, որոնք կարող են դիտարկվել իբրև մեկ ընդհանուր հակամիլիտարիստական սոցիալական շարժում<sup>3</sup>: Դրանք են՝ «Բանակն իրականում», «Սեվազգեստ մայրեր» և «1000 դրամ»: Դիսկուրս վերլուծության են ենթարկվել այս նախաձեռնությունների կողմից հրապարակված գրառումները

---

<sup>3</sup> Հիմք ընդունելով սոցիալական շարժման դասական սահմանումները, որոնք վերջինս սահմանում են իբրև կոլեկտիվ գործողության տեսակ, որը նպատակ ունի փոփոխել առկա սոցիալական կարգը մասնակի կամ ամբողջությամբ, կարող ենք պնդել, որ այս նախաձեռնությունները հանդիսանում են սոցիալական շարժում: Դրանք գործառնում են ցանցային մոդելով և որպես վերջնական նպատակ հետապնդում են ՀՀ բանակի ինստիտուտի մասնակի վերափոխում, օր – պարտադիր զորակոչի պահանջի դադարեցում, կամ ամբողջակալ՝ օր – առհասարակ բանակի ինստիտուտի վերացում:

սոցիալական մեղիայում՝ պաշտոնական բլոգերում, ֆեյսբուքյան պաշտոնական էջերում: Հակամիլիտարիստական շարժումն առավել ակտիվ է եղել 2011–2017թթ.: Այդ ժամանակահատվածում իրականացվել են բազմաթիվ բողոքի ակցիաներ, եղել են բազմաթիվ պաշտոնական հայտարարություններ և մամուլի հրապարակումներ, ուստի կարիք կա ուսումնասիրել հենց այս ժամանակահատվածի հռետորաբանությունը: Հետազոտությունը կենտրոնանում է 2011–2017թթ. հռետորաբանության ուսումնասիրության վրա: Դիսկուրս վերլուծության շրջանակներում միֆոլոգեմներն առանձնացնելու համար իրականացվել է տեքստի վերլուծություն՝ խմբավորվել են նույն թեման ներկայացնող, նույն էմոցիոնալ երանգ ունեցող գնահատող դատողությունները: Ապա ընդհանրացվել են մեկ հավաքական միֆոլոգեմի տեսքով, որը ներկայացնում է բանակի որևէ կողմը կամ հատկանիշ:

Կարևոր է նշել, որ թե մինչև 2010-ական թվականները, թե 2016-ից հետո, բանակի և երկրի պաշտպանական քաղաքականության վերաբերյալ եղել են գործընթացներ, որոնք ևս կարելի է ուսումնասիրել որպես սոցիալական շարժում: Այդպիսիք են՝ 2017 թվականին սկիզբ առած «Հանուն գիտության զարգացման» ուսանողական շարժումը, որը պայքարում էր տարկետման իրավունքի համար, և «Ազգ-բանակ» հայեցակարգի շուրջ ծավալված քննադատական դիսկուրսը: Ներկայումս շարժումներն ակտիվությունը փոքր-ինչ պակաս է, ինչպես նաև տեսանելի է շեշտադրումների փոփոխություն հռետորաբանության մեջ, ուստի և ներկայիս զարգացումները, և 2017թ.-ին ծավալված 2 շարժումները մեկ այլ հողվածի կամ հողվածների ուսումնասիրության նյութ են: Այսպիսով, հայկական հակամիլիտարիստական շարժումը ծավալվել է մի քանի հիմնական դիսկուրսիվ ուղղություններով, որոնցից յուրաքանչյուրն արտահայտվում է միֆոլոգեմների տեսքով: Ընդհանուր առամբ վերլուծվել է 300 միավոր նյութ նշված ժամանակահատվածի համար:

Դիսկուրսի հիմնական ուղղվածություններ են՝

### **Զինվորների իրավունքները պաշտպանվածություն**

Ամենահաճախ հանդիպող թեման է, որը դրսևորվում է համանուն միֆոլոգեմի տեսքով: Վերջինս շատ հաճախ շրջանառվում է շարժման

թե՛ առաջնորդների, թե՛ մասնակիցների կողմից: Այս միֆոլոգները ենթադրում է իրավունքների խախտման մի քանի կետ՝ զորակոչի ժամանակ բժշկական ստուգման թերություններ, անուշադրություն նորակոչիկների առողջական խնդիրներին, կոռուպցիա, շարունակական կրթության իրավունքի խախտում, ինչպես նաև դեպքեր, որոնք արձանագրվում են հենց զինվորական ծառայություն ընթացքում, օրինակ՝ զինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրական հարաբերությունների առկայություն և այլն: Այս դիսկուրսիվ ուղղվածությունը արտահայտվում է հետևյալ միֆոլոգեմների միջոցով:

- *Չհինվորների իրավունքներն անտեսված են բանակում:*
- *Բանակում առկա է հանցավոր անտարբերության, բռնության, խոշտանգումների մթնոլորտ<sup>4</sup>:*
- *Չհինվորները հոգեբանորեն ճնշված են:*
- *Չհինվորները զրկված են կրթության շարունակական իրավունքից:*

**Արտականոնադրական հարաբերությունները զինված ուժերում**

Շարժման հոետորաբանությունում հաճախակի խոսվում է բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների մասին՝ նկատի ունենալով քրեական մշակույթի առկայությունը զինվորական կոլեկտիվներում: Սա ամենատարածված դիսկուրսներից է, որը շրջանառվում է գրեթե բոլոր հակամիլիտարիստական շարժումների կողմից: Այդպիսով, դրանք անուղղակիորեն մատնանշում են, որ բանակում բացակայում է կարգ ու կանոնը, մարդկային փոխհարաբերությունները կարգավորվում են ոչ թե ՁՈՒ կանոնադրությամբ, այլ քրեական ենթամշակույթին հատուկ բարքերով: Հետևաբար, հարցականի տակ է դրվում բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի հեղինակությունը. **«ինչպե՞ս պետք է զինվորը պաշտպանի իր հայրենիքը, եթե, նույնիսկ, ինքն իրեն չի կարողանում պաշտպանել»:** Այս դիսկուրսը արտահայտվում է հետևյալ միֆոլոգեմների միջոցով՝

- *Բանակում տիրում են հանցագործ բարքեր:*

<sup>4</sup> «Բանակն առանց մարդասպանների» ակցիան նախագահականի առաջ», <https://www.1in.am/32712.html> ըստ՝ 08/09/2011

*-Բանակում առկա է հանցագործների հովանավորչություն:*

*-Բանակում ամենաթողության մթնոլորտ է տիրում:*

Այս միֆոլոգեմները նախորդների շարունակությունն են և հանդիսանում են ևս մեկ միջոց ամրապնդելու այն կարծիքը, որ հայկական բանակում զինվորը պաշտպանված չէ ոչ միայն արտաքին թշնամուց, այնպես էլ հենց իր հայրենակիցների կողմից: Շարժման դիսկուրսում հաճախակի հանդիպող հակադրություններից է հայկական բանակի սպան և հայկական բանակի զինվորի հակադրություն, որտեղ սպան ներկայացվում է իբրև վտանգի աղբյուր, երբեմն՝ թշնամի հայկական զինվորի համար: Իբրև այս դիսկուրսի ամրապնդման միջոց դիսկուրսում կարելի է հանդիպել զինվորների շահագործման մասին միֆոլոգեմներ:

Մեջբերում. *«Մայրը Նազարեթյանը գորամասը գոմ էր դարձրել, զինվորին էլ՝ անասնապահ...»<sup>5</sup>:*

**Զինված ուժերի և առողջապահության ոլորտի փոխառնչություններ**

Շարժման դիսկուրսի ուղղություններից է զինվորների առողջությանը, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած առողջական խնդիրների և դրանց տրվող լուծումների, ինչպես նաև գորակոչվելուց առաջ բժշկական գննության հարցերը: Մասնավորապես, քննարկվում են դեպքեր, երբ բանակ են գորակոչել առողջական խնդիրներ ունեցող անձանց, կապելով դա կոռուպցիայի առկայության հետ, կամ պատշաճ բուժօգնություն չի ցուցաբերվել ծառայության ընթացքում առողջական խնդիր առաջանալու դեպքում: Այս դիսկուրսը արտահայտվում է հետևյալ միֆոլոգեմների միջոցով.

*– Զորակոչվում են առողջական խնդիրներ ունեցող զինվորներ<sup>6</sup>:*

<sup>5</sup> «Թալանում են բանակի միջոցով, յուրաքանչյուրը՝ իր տրամաչափով», <https://www.1in.am/43331.html> ըստ՝ 17/09/2011

<sup>6</sup> «Իշխանությունների գործելաճը բանակում ճակատագրական է դառնում շատ զինծառայողների համար. «Բանակն իրականում», <https://www.1in.am/247483.html> ըստ՝ 28/01/2014

Մեջբերում. «ՊՆ-ն տեղյակ էր զինձառայողի խելագարության մասին<sup>7</sup>»:

– *Չինձառայողների բուժումը անարդյունավետ է իրականացվում:*

– *Չինձառայողի առողջությունն անտեսված է թե՛ առողջապահության, թե՛ պաշտպանության նախարարության կողմից:*

Մեջբերում. «*Զինվորի մահ է գրանցվել ուշ սոնոգրաֆիա անելու պատճառով, ոչինչ չեն արել գիշերը գորամասի ղեկավարին արթնացնել*»<sup>8</sup>:

**Զինված ուժերում միջադեպերի իրավական քննության հիմնախնդիրները**

Այս ուղղությունը մատնանշում է ոչ միայն բուն զինված ուժերի և իրավական ոլորտի փոխառնչությունները, այլ նաև ընդհանուր առմամբ երկրում օրենքի գերիշխանության բացակայությունը: Ընդ որում, խնդիրներ են մատնանշվում սկսած քննչական աշխատանքի թերություններից, մինչ դատարանների անկախության բացակայություն, համատարած կոռուպացվածություն: Հաշվի առնելով, որ շարժման հիմնական մասնակիցները երիտասարդներ են, ովքեր հանդիսանում են քաղաքացիական հասարակության մաս, զարմանալի չէ, որ այս շարժման հոետորաբանության մեջ կարելի է տեսնել դատական համակարգի, մասնավորապես՝ դատարանների հանդեպ անվստահություն: Առհասարակ սոցիալական շարժումների միֆոլոգեմները շատ հաճախ են կառուցվում «անպատժելիության», «անօրինականության», «անարդարության» և «անհավասարության» գաղափարների շուրջ, քանի որ դրանք են այն հիմնական առանցքները, որոնք ստիպում են անհատների համալրել շարժման կազմը: Քանի որ հենց դրանք են այն սոցիալական պահանջմունքները, որոնք մեծապես բավարարված չեն հասարա-

<sup>7</sup> «ՊՆ-ն տեղյակ էր զինձառայողի խելագարության մասին. Իրավապաշտպանները գրել են նախարարին», <https://epress.am/2011/09/06> հրապարակված՝ 06/09/2011:

<sup>8</sup> «Զինվոր է, ցավա պիտի: Վերջ: Մահացավ էլ, ջանդմիս չի մահանա: Զինվորն ո՞վ է», <https://168.am/2013/04/15/210556> հրապարակված 13/04/2013:

կությունում և դրանց միջոցով է առաջանում հասարակական դժգոհությունը, բողոքը և ընդվզումը: Այս հարցի շուրջ դիսկուրսը արտահայտվում է հետևյալ միֆոլոգեմների միջոցով.

– *Ղատական նիստերին հնչած խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունները չեն քննվում դատարանի կողմից, տեղի ունեցած բռնությունների և իրավունքների խախտումները, հատկապես սպանությունները կամ մահվան ելք ունեցող միջադեպերը մնում են չբացահայտված և անպատիժ:*

– *ՊՆ-ն կոծկում է բանակում կատարվող բռնությունները:*

– *Երկրում չկա օրենքի գերակայություն:*

– *Բանակն ու ամբողջ պետական համակարգը խորապես կոռումպացված է:*

Մեջբերում. «**Վերին Գետաշենի գյուղապետը մահացած զինձառայողի անունով դուրս գրված գումարները լափում, վիլլաներ է սարքում...**»<sup>9</sup>

– *Բանակում մահվան դեպքերը կոծկվում են, իրական մեղավորները չեն պատժվում:*

Մեջբերում. «**Գևորգ Կոստանյանին, ում ղեկավարությամբ պարտակվել են զինված ուժերում տեղի ունեցած բազմաթիվ հանցագործություններ և հանցագործներ՝ դեպքերի ականատեսներին խոշտանգումների և ճնշումների ենթարկելու, ստի և կեղծիքի, արդարություն որոնող ընտանիքների առողջության գնով**»<sup>10</sup>:

– *Իշխանությունները անգործություն և անկարողություն են դրսևվորում բանակի հիմնախնդիրներ լուծելու ուղղությամբ:*

Զինված ուժերում կատարված միջադեպերի և մահվան դեպքերի հաղորդման տեղեկատվական քաղաքականությունը:

<sup>9</sup> «Վերին Գետաշենի գյուղապետը մահացած զինձառայողի անունով դուրս գրված գումարները լափում, վիլլաներ է սարքում», <https://newsbook.am/?p=-80548/verin+getasheni+gyuxapety+mahacac+zincarayoxi+anunov+durs+grvac+gumarnery+lapum+villaner+e+sarqum&l=am> հրապարակված՝ 18/06/2016:

<sup>10</sup> «Բանակն իրականում». գորակոչվում են հիվանդ զինվորները», <https://hetq.am/hy/article/32217> հրապարակված՝ 28/01/2014:

Շարժման դիսկուրսի հաջորդ կարևոր ուղղությունը վերաբերում է բանակում զոհերի մասին տեղեկատվության հաղորդմանը: Հիմնականում, ընդգծվում է զոհերի մեծ քանակը և հաճախականությունը, մատնանշելով, որ դա «հերթական» զոհն է, կամ հայկական կողմը «նորից» զոհ ունի: Հաճախ նշվում է, որ զոհերի և բռնությունների իրական թիվը շատ ավելին է, քան արձանագրվել է համապատասխան մարմնի կողմից: Բացի այդ, շարժման դիսկուրսում կարելի է հաճախ հանդիպել, որ բանակում տեղի ունեցող սպանությունները ներկայացվում են որպես ինքնասպանություն: Այս պարագայում միֆոլոգեմները կառուցվում են հայ զինվորի անպաշտպանության, նրա հանդեպ անարդարություն ու անտարբերության գաղափարների շուրջ: Այս դիսկուրսը ներկայացնող հիմնական միֆոլոգեմներն են՝

– *Բանակում զինվորների մահը հաճախակի բնույթ ունի:*

Մեջբերում. «**Հունվարը դեռ չի ավարտվել, բայց հայկական բանակն արդեն 3 զոհ է տվել**»<sup>11</sup>:

– *Բանակում զոհերի իրական թիվը ավելին է, քան հայտարարվում է:*

– *Բանակում զոհված զինվորների մահվան հանգամանքները թյուր են ներկայացվում:*

**Բարձրաստիճան պաշտոնյաների, զինվորականների և ոստիկանների**<sup>12</sup> **վերաբերմունքը մահացած զինվորների հարազատների հանդեպ**<sup>13</sup>:

<sup>11</sup> «Բա զոհե բանակի օրով մեզ մի հատ պսակ չտա՞ն, ասեն՝ տարեք ձեր երեխեքի շիրիմներին դրեք». <https://medialab.am/9761/> հրապարակված՝ 28/01/2014:

<sup>12</sup> «Ոստիկանները հարվածում և սաղրում են սևազգեստ մայրերին», <https://www.youtube.com/watch?v=BsmWgZw5bwY> հրապարակված՝ 13/05/2015:

<sup>13</sup> «Ոստիկանները կրկին քաշքշել են սևազգեստ մայրերին. կրկին ծառայողական քննություն է սկսվել», <https://www.armtimes.com/hy/article/63980> հրապարակված՝ 13/05/2015:

Հայաստանյան հակամիլիտարիստական շարժման հռետորաբանության բաղադրիչներից մեկը գոհված զինծառայողների ծնողների և հարազատների հանդեպ վերաբերմունքի ներկայացումն է: Այս բաղադրիչը ներկայացնող միֆոլոգեմները հիմնվում են էմոցիոնալ բարձր ծանրաբեռնվածություն ունեցող փաստերի վրա և իրականում ներկայացնում են պետական համակարգի վերաբերմունքը զինվոր կորցրած անհատների հանդեպ, այդպիսով ևս մեկ անգամ անուղղակի ձևով մատնանշելով, որ պետությունը հոգ չի տանում ոչ միայն զինվորի մասին, այլ նաև նրա ընտանիքի մասին, մինչդեռ հասարակությունը ակնկալում է հակառակը. հայրենիքի պաշտպանությունը մեծագույն արժեք է և առաքինություն: Նաև, նշվում է գոհված զինծառայողների ծնողների և ակտիվիստների կողմից կազմակերպված հավաքների, կամ բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանների կողմից բիրտ ուժի կիրառման մասին:

– *Պետությունը գոհվածների ծնողներին արհամարհական է վերաբերվում:*

Մեջբերում. «Մերժ Սարգսյանը չի ընդունել գոհվածների ծնողներին, ճաղերի հետևից է խոսել նրանց հետ<sup>14</sup>»:

– *Ոստիկանությունը ապօրինի գործողություններ է կատարում խաղաղ հավաքների մասնակիցների հանդեպ:*

Մեջբերում. «Ազատության» *հրապարակում իրականացվող խաղաղ ակցիան հերթական անգամ հանդիպեց ոստիկանության կողմից իրականացվող ապօրինություններին: Բիրտ ուժի կիրառմամբ ոստիկանության աշխատակիցներն սկզբում խոչընդոտեցին ակցիայի մասնակիցների մուտքն «Ազատության» հրապարակ, այնուհետև՝ բերման ենթարկեցին ակցիային իրենց զորակցությունը հայտնած երեք քաղաքացիների՝*

<sup>14</sup> «Մերժ Սարգսյանը խոսեց ճաղերի հետևից», <https://a1plus.am/hy/article/43822> հրապարակված՝ 27/01/2011:



**Վարդգես Գասպարիին, Արա Նեղոյանին և «Խաղաղության երկխոսություն» հկ-ի աշխատակից Արտաշես Մերգոյանի հանդեպ<sup>15</sup>:**

Զինված ուժերի բարձրաստիճան պաշտոնյաների, Պաշտպանության նախարարության քննչական բաժնի, զինվորական դատախազության ճնշումները զինված ուժերում կատարվող միջադեպերը լուսաբանող լրագրողների հանդեպ

Այս թեման վերաբերում է բանակում կատարվող միջադեպերի վերաբերյալ լրագրողների գրած ռեպորտաժներին: Ըստ շարժման, դրանք ոչ թե հիմք են դառնում բանակում կատարված հանցագործությունները բացահայտելուն, այլ պատճառ են դառնում ճնշումների ենթարկել լրագրողներին: Այս թեմայի վերաբերյալ հիմնական միջոցներն են՝

– *Պաշտպանության նախարարությունը ապօրինի ճնշումների սպառնալիքների և ահաբեկումների է ենթարկում բանակում բռնության դեպքերը լուսաբանող լրագրողներին՝ կանչում է հարցաքննության, պահանջում տեղեկատվության աղբյուրները, զանգում և պահանջում հեռացնել նյութերը:*

– *Որպես հանցագործության հաղորդում չի ընդունում լրագրողների հրապարակած հոդվածները և չի պատժում մեղավորներին:*

Մեջբերում. «Փոխարենը, ՀՀ պաշտպանության նախարարի կողմից իրախուսվում և մեղալներ են ստանում հենց այն լրագրողները, ովքեր հեռու են բանակում իրական հանցավորության մթնոլորտը ներկայացնելուց: Նման գործելակերպը վկայում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը շարունակում է բռնությունները կոծկելու արատավոր իր պրակտիկան<sup>16</sup>»:

<sup>15</sup> «Խաղաղության երկխոսություն» հկ-ի հայտարարությունը՝ հունվարի 28-ին «բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության ակցիայի ժամանակ ոստիկանության ապօրինի գործողությունների կապակցությամբ, <https://peacedialogue.am/2014/01/29/> հրապարակված՝ 29/01/2014:

<sup>16</sup> «Բանակն իրականում». զինդատախազությունն ու ՊՆ-ն ճնշում են բանակի խնդիրները լուսաբանող լրագրողներին», <https://hetq.am/hy/article/12137>, հրապարակված՝ 20/03/2012:

### **Զինձառայողների սոցիալական պաշտպանությանը հանրային ֆինանսական մասնակցության հարցեր:**

Այս թեման խնդրականացվեց, երբ խորհրդարանը առաջ քաշեց «1000 դրամների» հիմնադրամի ստեղծման օրինագիծը, որը քաղաքացիական անձանց ֆինանսական պարտավորությունն է հայկական բանակի առաջ: Այս բաղադրիչի միֆոլոգեմները ոչ այլ ինչ են քան ազգբանակի կոնֆլիկտի ներկայացում: Շարժման նարրատիվները հարցականի տակ են առնում, թե ինչու պետք է շարքային քաղաքացիները հավելյալ գումար վճարեն բանակի համար, չէ որ արդեն հարկեր են վճարում, որոնցից և գոյանում է բանակի բյուջեն: Միևնույն ժամանակ այս նարրատիվներում կրկնվում է «երկիրն ամենաթողության վիճակում է» միֆոլոգեմը՝ ակնարկելով բանակում և այլ պետական կառույցներում բացահայտ կոռուպցիայի դեպքերը և հետևաբար ինստիտուցիոնալ վստահության պակասը այդ նախաձեռնության հանդեպ:

– 1000 դրամների նախաձեռնությունը անօրինական է:

– 1000 դրամների նախաձեռնությունը քաղաքացուն կողոպտելու նոր ձև է:

Մեջբերում. «**Թող թալանածը հետ վերադարձնեն, այլևս 1000 դրամ ժողովրդից վերցնելու կարիք չի լինի**<sup>17</sup>»:

### **Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի քննադատություն**

Քննադատությունը մատնանշում է, որ տվյալ օրենքը հակասում է ինչպես Սահմանադրությանը, այնպես էլ միջազգային իրավունքին և Եվրոպական ստանդարտներին: Խոսքը այն մասին է, որ ՀՀ Զինված ուժերը լիազորված են կատարել գործողություն, որը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես մասնակցել ներպետական հարցերին, և արտակարգ իրադրության ռեժիմում մասնակցել այդ ռեժիմի պահպանմանը: Արտահայտվում է հետևյալ միֆոլոգեմներով՝

<sup>17</sup> «Եթե կրճատվի ստվերի 1 տոկոսը, 1000 դրամի հարցը կլուծվի. Սաքունց», <https://www.youtube.com/watch?v=ywosXPS8p-8%20%D4%B5%D5-%A9%D5%A5>, հրապարակված՝ 14/11/2016:

– ՀՀ Զինված ուժերը ՀՀ Սահմանադրությանը և Միջազգային իրավունքին հակասող գործառույթ ունեն:

– Այդ գործառույթը կարող է խոչընդոտել ՀՀ քաղաքացիների կամարտահայտմանը և հակասում է ՀՀ քաղաքացիների անօտարելի իրավունքներին:

### **Պատերազմի շուրջ դիսկուրս**

Պատերազմների մասին միֆոլոգիզացված նարատիվները շատ տարածված են:

– *Պատերազմը պետք է պետություններին և ոչ թե Հայաստանի ու Ադրբեջանի քաղաքացիներին, հատկապես՝ զինվորներին:*

Շրջանառվում է նաև այս միֆոլոգեմի մի փոքր ձևափոխված տարբերակը՝ «պատերազմը պետք է միայն գերտերություններին»: Այս միֆոլոգեմը թաքնված իմաստ ունի. պատերազմը ենթադրում է մեծ գումարներ զինամթերք արտադրող պետությունների համար: Հետևաբար այն կարող է շահութաբեր լինել միայն գումարներ ստացող կողմի համար, ոչ թե պատերազմող կողմերի համար, որոնք ունենալու են մարդկային, ֆինանսական և նյութական հսկայական կորուստներ: Նաև, ակնարկելով, որ փոքր պետությունները ինքնուրույն ոչինչ չեն որոշում, և պատերազմում են որևէ գերտերության շահերը տարածաշրջանում ամրապնդելու համար: Թերևս, ներկայացնելով իրականության պարզեցված պատկեր՝ միֆոլոգեմը անտեսում է այն փաստը, որ չպատերազմել հնարավոր է այն դեպքում, երբ երկու պետություններն էլ ունեն համաձայնություն և քաղաքական կամք ընդունել խաղաղությունը: - Խաղաղության և ապառազմականացման ջանքերը պետք է համաչափ իրականացվեն զինված հակամարտության մեջ գտնվող երկրներում, այլապես, միայն մի կողմին վաղաժամ ապառազմականացնելով, և պատրաստելով խաղաղության, իսկ հակամարտության մյուս կողմում գերազանցականացումը, սպառազինությունների գնումը և հասարակության մեջ ատելության սերմանումը կրեթի ոչ թե խաղաղության, այլ կողմերից մեկի ջախջախմանը:

### **Քննարկում**

Հակամիլիտարիստական շարժման դիսկուրսի դիտարկումը թույլ է տալիս խոսել այն հիմնական առանցքների մասին, որոնց շուրջ կառուցվում է բանակի կերպարը: Այդ ուղղությունները ՀՀ զինված ուժերի այն ասպեկտներն են, որոնք մշտապես խնդրականացվում են ոչ միայն դիտարկվող շարժումների, այլ նաև մամուլի, տարբեր հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպանների և հասարակության կողմից: Դրանք են՝

- Բանակում զինվորների մահման դեպքերի քննություն:
- Բանակում մարդու իրավունքների պաշտպանվածության հարցը:
- Զինճառայողների առողջության հանդեպ անտարբեր վերաբերմունքը և բժշկական սպասարկման թերությունները:
- Ոչկանոնադրական հարաբերություններ:
- Կրթական գործընթացի անընդհատության ապահման անհնարինություն:
- Քաղաքացիական ծառայության պարտադրողականություն:
- Զինճառայողների ապահովագրության հիմնադրամին պարտադիր ֆինանսական մասնակցություն (1000 դրամների հիմնադրամ):
- Բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականներ, ոստիկանների վերաբերմունքը զոհված զինճառայողների հարազատներին, ակտիվ քաղաքացիներին և լրագրողներին:
- Բանակի ինստիտուտի անհրաժեշտության վերանայում:
- Խաղաղության օրակարգի ձևավորում:

Այս առանցքները մատնանշում են ոչ միայն ՀՀ բանակի խնդրահարույց ասպեկտները՝ ըստ շարժման, այլ նաև այդ խնդիրների ամբողջական կամ մասնակի լուծում: Թերևս, նշված թեմաներից, ոչ բոլորն են հանդես գալիս իբրև միֆոլոգեմներ: Այդպես, հակամիլիտարիստական շարժումը որպես բանակում առկա խնդիրների լուծում տեսնում է՝

- կադրային արմատական փոփոխություններ,

- զինվորների մահվան դեպքերի արդար քննության ապահովում,
- քաղաքական և ռազմական վերնախավի, ինչպես նաև դատական համակարգի և զինվորական դատախազության ներկայացուցիչների փոփոխություն,
- տարկետման չափորոշիչների վերանայում և մշակում,
- զինված ուժերը մարդկային ռեսուրսով համալրելու այլ տարբերակներ՝ օրինակ պայմանագրայինների թվի ավելացումը,
- Զինված ուժերի և զինձառայողների ֆինանսական ապահովության հարցերի լուծում, ստվերային տնտեսության և կոռուպցիայի կրճատման միջոցով:

Այսպիսով՝ համաձայն հակամիլիտարիստական շարժման դիսկուրսի՝ վերջինիս հայտարարված նպատակն է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների բացահայտումը և միջադեպերի արդար քննությանը: Շարժման հռետորաբանությունը բավական հուզական է և նեգատիվ: Կիրառվում են այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ամենաթողություն, անպատժելիություն, խոշտանգումներ, իրավունքների ոտնահարում, նվաստացում, հանցագործությունների պարտակում և այլն:

### **Ամփոփում**

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ՝ հայկական հակամիլիտարիստական շարժման հռետորաբանության կամ միֆոլոգեմի դիտարկումը, թույլ է տալիս հասկանալ, թե ինչպիսի բանակի կերպար է կառուցակցվում հասարակության համար: 2011-2017 թվականների դիսկուրսի ուսումնասիրության համաձայն, հակամիլիտարիստական շարժումը ներկայացնում է հայկական բանակը իբրև թույլ և անպաշտպան, բազմաթիվ արատավոր խնդիրներով՝ կոռուպցիա, արտականոնադրական հարաբերություններ, անպատժելիություն և ամենաթողություն: Հայկական բանակը ներկայացվում է իբրև մի միջոց, որի օգնությամբ մանիպուլացնում են հանրությանը՝ հավելյալ գումարներ կորզելու համար միևնույն ժամանակ անտեսելով զոհվածների ընտանիքիների վիշտը:

ՀՀ բանակի վերաբերյալ միֆոլոգեմների ուսումնասիրությունը թույլ է տալիս պատասխանել նաև մեկ այլ կարևոր հարցի՝ ինչու խաղաղության արժեքը քարոզող շարժումը չի կարողանում մեծ թվով համակիրներ համախմբել իր շուրջ և զգալի ազդեցություն ունենալ: Այս երևույթի պատճառները տարբեր են: Նախ, հակամիլիտարիստական շարժման գաղափարախոսությունը սկիզբ է առել պատերազմ նախաձեռնող հասարակություններում, իսկ ՀՀ-ն պատերազմը նախաձեռնողի դերում չէ, և գերխնդիր ունի ապահովել իր քաղաքացիների ֆիզիկական անվտանգությունը և իր սահմանների անձեռնմխելիությունը: Հետևաբար, հայ հասարակությունը խաղաղություն պահանջելով գիտակցում է, որ այն պետք է լինի երկկողմանի: Քանի դեռ Ադրբեյջանը ունի տարածքային ձգտումներ, իսկ Թուրքիան այլ նախապայմաններ, հայկական կողմի խաղաղության կոչերը անպատասխան են մնալու: Մեկ այլ պատճառը այն է, որ հայկական հակամիլիտարիստական շարժումը, ինչպես տեսանք, կառուցում է հայկական բանակի կերպարը քննադատության և պարսավանքի հիման վրա, շեշտադրելով բանակի միայն բացասական կողմերը, անտեսելով այն հանգամանքը, որ տարիներ շարունակ հայկական բանակն է եղել պետության և քաղաքացու ֆիզիկական անվտանգության պաշտպանը՝ վայելելով քաղաքացու անվերապահ վստահությունը: Հետևաբար, հակամիլիտարիստական շարժման կողմից քարոզվող արժեքները և եղանակները կոնֆլիկտի մեջ են մտնում հասարակության դոմինանտ արժեքների հետ, ինչի պատճառով էլ այն չի կարողանում լայն մասսաների ներգրավվել, ընդհակառակը՝ իր դեմ տրամադրելով հասարակության որոշ շերտերին: Շարժման անհաջողության պատճառներից մեկը նաև ձևակերպած նպատակների մեջ է: Ցանկանալով հասնել խաղաղության օրակարգի շարժումը պահանջում է քաղաքական վերնախավի փոփոխություն, բայց վերջինս չունի ոչ մի տեսակի լծակ այս նպատակը իրականացնելու համար: Եթե դիտարկենք շարժման զարգացումը ապագայում կարելի է կանխատեսել, որ վերջինս հետզհետե կմարի, քանի որ չունի շոշափելի արդյունք-

ներ, որոնք կմոտիվացնեն իր շուրջ համախմբված անհատներին ու խմբերին, իսկ սահմանված նպատակները ձևավորած իրականության պայմաններում շատ լայն են և դժվար իրագործվող:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Смелзер Н.* Социология. М.; Феникс, 1998. С. 595.
2. *Штомпка П.* Социология социальных изменений. М., Аспект Пресс. 1996. С. 242.
3. *Shaw M.* Post Military Society: Militarism, Demilitarization, and War at the end of Twentieth Century. Temple University Press, U.S, 1991.
4. *Shaw M.* The Development of “Common –Risk” Society: A theoretical Overview. / Military and Society in Twenty First Century Europe, A comparative Analysis. Transaction Publishers, US, 2000. PP. 13–26.
5. *Habermas J.* The Theory of Communicative Action. Vol. 1-2. Boston, 1984. P. 395.
6. *Турен А.* Возвращение человека действующего. Очерк социологии. М.; «Научный мир», 1998. С. 64.
7. *Della Porta D.; Diani M.* An introduction: Social movements. Second Edition, Blakcwell Publishinsh; 2006. P.1.
8. *Lieberfeld D.* What makes an effective antiwar movement? Theme-issue introduction. International Journal of Peace Studies, 13(1), 1–14, 2008. P. 2.
9. *Gamson, W. A.* The Strategy of Social Protest. 2nd ed. Belmont, CA: Wadsworth Publishing, 1990. P. 42.
10. *Giugni M.* International Encyclopedia of the Social & Behavioral Sciences, Peace Movements, 2015. PP. 643–647.
11. *Appleton L.* Memoirs of Henry Richard, the Apostle of Peace. Trubner & Co., 1889. P. 5.
12. *Шульга Н В.* Мифотворчество в средствах массовой информации / Концепт #3, 2013. [режим доступа: <https://cyberleninka.ru/article/n/mifotvorchestvo-v-sredstvah-massovoy-informatsii/viewer>].
13. *Beck U.* Risk Society Towards a New Modernity. SAGE publications, US, CA 1992.
14. *Мертон Р.* Социальная теория и социальная структура. М; Хранитель, 2006. С. 606.
15. *Caterino B., Phillip H.* Towards a Critical Theory of Democracy: Participatory Democracy and Social Freedom in Critical Theory, Democracy, and the Challenge of Neoliberalism. PP. 232–81. University of Toronto Press, 2019. P. 233.
16. *Burk J.* The Military in New Times Adapting Armed Forces to a Turbulent World. Westview Press, London, 1994. P. 4.

## **МИФОЛОГЕМА АРМЯНСКОЙ АРМИИ В КОНТЕКСТЕ РИТОРИКИ АРМЯНСКОГО АНТИМИЛИТАРИСТСКОГО ДВИЖЕНИЯ**

*А.М. Амбарцумян, Г.М. Арутюнян*

### **АННОТАЦИЯ**

Трансформация индустриальных обществ, а также тяжелые последствия двух мировых войн провозгласили величайшим общественным благом и социальной ценностью общее перемирие. Под влиянием целого ряда таких факторов, как изменение характера коммуникаций, глобализация, улучшение качества жизни начался интенсивный процесс изучения вопросов, связанных, в целом, с военной сферой, армией, а так же осмысления социальных механизмов, способствующих прекращению войн и воцарения мира. Параллельно этим процессам, парадигма главенства военной доктрины тоже стала уступать место другим парадигмам. В прошлом приоритетом для государства и общества, в целом, считалось военная доктрина, так как она обеспечивала физическую безопасность общества и обуславливала деятельность остальных социальных институтов, но в постиндустриальных обществах ценностная система стала постепенно меняться, уступая первенство тем факторам, которые способствовали повышению качества жизни в целом. К сожалению, для некоторых государств, вместе со сменой общих ценностей, военная угроза не стала меньшей, в результате чего возник новый социальный конфликт между обществом, которое больше не желало воевать и требовало улучшения образования, медицинских услуг и т.д. и государством, которое должно обеспечивать физическую безопасность своих граждан и неприкосновенность своих границ, иногда прибегая к военным действиям. Одним из альтернативных социальных механизмов преодоления этого социального конфликта являются антимилитаристские общественные движения. Цель этих социальных движений – волеизъявление граждан против военной повестки и попытка препятствия принятия государством таких решений, которые могут спровоцировать военные действия.

Возникновение армянских антимилитаристских движений обусловлено теми же факторами. В последние десятилетия Армения, как государство, находилась под постоянной военной угрозой со стороны другого государства – Азербайджана. Несмотря на то, что связь общества и армией и всегда была тесной, современные тенденции, ставящие во главу ценность мира – как самое желанное благо для общества, проникли и в Армению, создав плодородную почву для зарождения антимилитаристического движения.

Цель данной статьи – понять, какой образ армянской армии конструирует армянское антимилитаристское движение при помощи изучения риторики движения, конкретное выявление мифологем, описывающих ту или иную характеристику армянской армии. В контексте данного исследования мы определяем мифологему как совокупность субъективных суждений, предназначенных для описания общего образа армии на основе стереотипичных образов. С этой точки зрения, мифологема является



одним из средств репрезентации общественно-исторической действительности, которая неизбежно включает в себя идеи и ценности составляющего ее сообщества. Мифологемы могут представлять реальность, частично видоизмененную в соответствии с логикой мифов. По этой причине в мифологеме могут быть представлены как факты, соответствующие действительности, так и факты, отличные от действительности и отклоняющиеся в положительную или отрицательную сторону.

Для достижения указанной цели были отобраны три наиболее активных, неформальных антимилитаристских инициативы, которые можно рассматривать как одно общее антимилитаристское социальное движение: «Армия в реальности», «Матери в черном» и «1000 драм». В виде метода сбора и анализа данных использовалась методология дискурс-анализа. Были проанализированы публикации этих инициатив в социальных сетях – официальных блогах, официальных страницах в Facebook. Антимилитаристское движение было наиболее активным в 2011–2017 годах. В этот период было много протестов, официальных заявлений, пресс-релизов и просто статей, поэтому необходимо изучить риторику именно этого периода. Для выделения мифологем был проведен текстовый анализ: сгруппированы оценочные суждения, представляющие одну тему и имеющие одинаковую эмоциональную окраску. Затем они были обобщены в виде одной мифологемы, репрезентирующей какой-либо аспект или признак армии.

Подводя итог, можно сказать, что изучение риторики армянского антимилитаристского движения, в частности, изучение мифологемы армянской армии, позволяет понять, какой образ армии выстраивает движение. Армянское антимилитаристское движение представляет армянскую армию слабой и беззащитной, имеющей множество проблемных аспектов: коррупция, внеконституционные отношения, безнаказанность и вседозволенность. Метод дискурсивного анализа позволил выявить следующие мифологемы, репрезентировавшие один или несколько аспектов армянской армии в риторике армянского антимилитаристского движения. Некоторые из них представлены ниже:

- В армии существует спонсирование преступников.
- В армии царит атмосфера вседозволенности.
- Вопросы здоровья солдат игнорируются государственными чиновниками.
- Минобороны скрывает случаи насилия в армии.
- В стране нет законности.
- Армия и вся государственная система глубоко коррумпированы.
- Реальное количество жертв в армии держится в строгой тайне.
- Чиновники скрывают обстоятельства гибели солдат, погибших в армии.
- Государство с пренебрежением относится к родителям пострадавших.
- Солдатам не хватает оружия, чтобы защитить себя, они не могут защитить государство.

Анализ дискурса антимилитаристского движения выявил следующие основные тезисы на которых строится образ армии. Эти направления являются теми аспектами

вооруженных сил РА, которые постоянно ставятся под сомнением не только наблюдаемыми движениями, но и прессой, различными неправительственными организациями, правозащитниками и обществом.

Расследование гибели солдат в армии

- Проблема защиты прав человека в армии.
- Безразличие к здоровью военнослужащих и недостатки в медицинском обслуживании.

- Внеуставные отношения.

- Невозможность обеспечения непрерывности образовательного процесса.

- Обязательный принцип военного служения.

- Обязательное финансовое участие в страховом фонде военнослужащих (фонд 1000 драм).

- Отношение высокопоставленных чиновников, военнослужащих, милиционеров к родственникам погибших военнослужащих, активным гражданам и журналистам.

- Рассмотрение потребности в армейском институте.

- Формирование повестки дня мира.

Изучение мифологий об армии РА также позволяет ответить на другой важный вопрос: почему движение, пропагандирующее ценности мира, не может собрать вокруг себя большое количество сторонников и оказать существенное влияние. Причин этого явления множество. Во-первых, идеология антимилитаристского движения зародилась в обществах-инициаторах войны, и РА не выступает в роли инициаторов войны, а имеет основной своей задачей обеспечение физической безопасности своих граждан и неприкосновенности своих границ. Поэтому армянское общество, требуя мира, понимает, что он должен быть двусторонним. Пока у Азербайджана есть территориальные притязания, а у Турции есть другие предпосылки, – мирные призывы армянской стороны останутся без ответа. Другая причина заключается в том, что армянское антимилитаристское движение, как мы заметили, строит образ армянской армии на основе критики, подчеркивая только отрицательные стороны армии, игнорируя тот факт, что за долгие годы армянская армия была защитником и гарантом физической безопасности государства, пользуясь безусловным доверием граждан. Поэтому ценности и методы, пропагандируемые антимилитаристским движением, вступают в противоречие с господствующими ценностями общества, из-за чего оно не способно вовлечь широкие массы и, наоборот, обращает определенные слои общества против себя. Одна из причин неудач движения кроется и в сформулированных им целях. Движение за достижение мирной повестки требует смены политической элиты, но у последней нет никаких рычагов для достижения этой цели. Если мы посмотрим на развитие движения в будущем, то можно прогнозировать, что оно будет постепенно угасать, потому что оно не имеет ощутимых результатов, которые бы мотивировали собравшихся вокруг него людей и групп, а поставленные цели очень широки и труднодостижимо в настоящих условиях реальности.

**Ключевые слова:** социальные движения, антивоенное движение, социальный конфликт, мифологема, дискурс-анализ.

**THE MYTHOLOGEME OF THE ARMENIAN ARMY IN THE  
CONTEXT OF RHETORIC OF ARMENIAN  
ANTI-MILITARIST MOVEMENT**

*A. Hambardzumyan, G. Harutyunyan*

**ABSTRACT**

The transformation of industrial societies, as well as the severe consequences of two world wars, declared a general peace to be the greatest social good and social value. Under the influence of a number of factors such as changing the nature of communications, globalization, and improving the quality of life, an intensive process of studying issues related to the military sphere, and the army as well as the understanding of social mechanisms contributing to the cessation of wars and the reign of peace began. Parallel to these processes, the paradigm of the leadership of military doctrine also began to give a way to other paradigms. In the past, the military doctrine was considered a priority for the state and society as a whole, as it ensured the physical safety of society and conditioned the activity of other social institutions, but in post-industrial societies the value system began to gradually change, giving priority to those factors that contributed to the improvement of the quality of life. Unfortunately, for some states, along with the change of common values, the military threat has not changed. As a result, a new social conflict arose between the society, which no longer wanted to fight and demanded the improvement of education, medical services, etc., and the state, which should ensure the physical safety of its citizens and the inviolability of its borders, sometimes resorting to military action. Anti-militarist public movements are one of the alternative social mechanisms for overcoming this social conflict. The purpose of these social movements is to express the will of citizens against the military agenda and try to prevent the state from making such decisions that may provoke military actions.

The emergence of Armenian anti-militarist movements is due to the same factor. In the last decade, Armenia as a state was under constant military threat from another state - Azerbaijan. Despite the fact that the relationship between society and the army has always been close, modern tendencies that prioritize the value of peace as the most desirable good for society have penetrated into Armenia, creating fertile ground for the birth of an anti-militaristic movement.

The purpose of this article is to understand how the Armenian anti-militarist movement constructs the image of the Armenian army by studying the rhetoric of the movement, more specifically identifying the mythologemes that describe one or another characteristic of the Armenian army. In the context of this research, we define mythologeme as a set of subjective judgments intended to describe the overall image of an army based on stereotypical images. From this point of view, the mythologeme is one of the means of presenting the socio-historical reality, which inevitably includes the ideas and values of the community that constitutes it. The mythologemes may represent the reality partially modified according to the logic of myths. For this reason, mythologeme can present both facts that correspond to reality, and facts that differ from reality and deviate to the positive or negative side.

So, to achieve our research goal, three of the most active, informal anti-militarist initiatives were selected, which can be considered as one general anti-militarist social movement. "Army in reality", "Mothers in black" and "1000 drams". Discourse analysis methodology was used as a data collection and analysis method. Publications of these initiatives in social networks - official blogs, and official Facebook pages - were analyzed. The anti-militarist movement was the most active from 2011-2017. In this period there were many protests, official statements, press releases, and simple articles, so it is necessary to study the rhetoric of the mentioned period.

The method of discourse analysis allowed us to reveal the following mythologems, which represented one or several aspects of the Armenian army in the rhetoric of the Armenian antimilitaristic movement. Some of them are represented below:

- There is sponsorship of criminals in the army.
- There is an atmosphere of permissiveness in the army.
- Soldier's health issues are neglected by state officials.
- The Ministry of Defense covers up cases of violence in the army.
- There is no rule of law in the country.
- The army and the entire state system are deeply corrupt.
- The actual number of victims in the army is more than announced.
- The circumstances of the deaths of soldiers killed in the army are not presented correctly.
- The state treats the parents of the victims with disdain.
- Soldiers don't have enough weapons to protect themselves, they can't protect the state.

Summing up, it can be said that studying the rhetoric of the Armenian anti-militarist movement, in particular, studying the mythologems of the Armenian army, allows us to understand how the Armenian army is characterized by the movement, what kind of picture of an army as a social institute is designed. As a result of the research, it can be stated that the Armenian anti-militarist movement represents the Armenian army as weak and defenseless, which has many problematic aspects such as corruption, unconstitutional relations, impunity, and permissiveness. The discourse analysis of the anti-militarist movement rhetoric revealed the following main theses on which the image of the army is built. These directions are those aspects of the RA armed forces that are constantly questioned not only by the observed movements but also by the press, various non-governmental organizations, human rights activists, and society.

- Investigation of deaths of soldiers in the army
- The issue of human rights protection in the army
- Indifference to the health of soldiers and deficiencies in medical care
- Relations out of status
- Impossibility of ensuring the continuity of the educational process
- Mandatory military service
- Mandatory financial participation in the insurance fund of military personnel (fund of 1000 drams)

- The attitude of high-ranking officials, military personnel, and policemen to relatives of fallen servicemen, active citizens, and journalists
- Reviewing the need for an Army Institute
- Shaping the peace agenda

So, according to the discourse of the anti-militarist movement, the stated goal of the movement is to expose human rights violations in the RA armed forces and to fairly investigate the incidents. The rhetoric of the movement is quite emotional and negative.

Studying the mythologem of the Armenian army also allows us to answer another important question: why the movement promoting the values of peace cannot gather around itself a large number of supporters and exert a significant influence. There are many reasons for this phenomenon. Firstly, the ideology of the anti-militarist movement was born in the war-initiating societies, and RA does not act as the initiator of the war but has the main task of ensuring the physical safety of its citizens and the inviolability of its borders. Therefore, the Armenian society, seeking peace, understands that it should be bilateral. As long as Azerbaijan has territorial claims, and Turkey has other preconditions, peaceful appeals from the Armenian side will remain unanswered. Another reason is that the Armenian anti-militarist movement, as we have seen, builds the image of the Armenian army on the basis of criticism, emphasizing only the negative aspects of the army, ignoring the fact that for many years the Armenian army was the protector and guarantor of the physical security of the state, enjoying the unconditional trust of citizens. Therefore, the values and methods promoted by the anti-militarist movement contradict the prevailing values of society, which is why it is unable to attract the masses.

**Key words:** social movement, anti-militarist movement, social conflict, mythologem, discourse analysis.

# ИСТОРИЯ

DOI 10.48200/1829-0450\_sh\_2022\_4\_110  
УДК 930

Поступила: 20.11.2022г.  
Сдана на рецензию: 23.11.2022г.  
Подписана к печати: 12.12.2022г.

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ

**Ջ.Թ. Թամարյան**

*ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ  
jenni.8282@mail.ru*

### ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես հիմնախնդիր հողվածում ներկայացվում են հայ-վրացական դավանաբանական առնչությունները XVIII դարում: Նկատի են առնվել կրոնական, լեզվական, ազգային, ինչպես նաև էթնիկական ինքնապահպանման հարցերը, վերլուծվել երկու եկեղեցիների հարաբերությունների բազմաշերտությունը. այն է՝

- հայերի իրավական կարգավիճակը Վրաստանում,
- հայ-վրացական հարաբերությունների վրա ռուսական գործունի ազդեցությունը,
- վրաց ազնվականության կողմից պարտադրվող կախվածությունը,
- Անտոն Ա-ի և եպիսկոպոսների Ռուսաստանում հաստատվելու փաստը,
- Հերակլ II-ի վարած քաղաքականությունը վրաց պատմագրության մեջ որպես Վրաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման արդյունք,
- հայոց կաթողիկոսանիստ Էջմիածինը վրաց արքայի հարկատու,
- վրաց արքունիքում ծառայության անցած հայազգի գործիչների որդեգրած վերաբերմունքը Էջմիածնի նկատմամբ,
- Անտոն Ա կաթողիկոսի և վրաց որոշ հոգևորականների փոխհարաբերությունները:

**Հիմնաբառեր՝** Հայաստան, կաթողիկոս, Վրաստան, մոնոֆիզիտ, Էջմիածին, Երևանի խանություն, կաթոլիկ:

Հայաստանն ու Վրաստանը ունեցել են ամենաբազմապիսի հարաբերությունները: Հայ բնակչության առկայությունը Վրաստանում բազմադարյա ու անընդմեջ է եղել, ինչը պայմանավորված էր ինչպես Հայաստանի քաղաքական վիճակով, այնպես էլ միջնադարում հայկական մի շարք գավառների Վրաստանի կազմում գտնվելու փաստով: Հայկական գաղթօջախներն ինչպես պետականության առկայության պայմաններում կարող էին դառնալ այս կամ այն երկրի հետ հարաբերություններում Հայաստանի համար հենակետ, այնպես էլ պետականության բացակայության դեպքում շատ երկրներում, որոնք որևէ ձևով հավակնություն ունեին Հայաստանի կամ հայոց հոգևոր կենտրոն Էջմիածնի նկատմամբ, իրենց երկրներում ստեղծված հայկական գաղթօջախները դարձնում էին պատանդ կամ լծակ՝ Հայաստանում իրենց քաղաքականությունը պարտադրելու կամ իրականացնելու համար: Այդ առումով Վրաստանը ևս բացառություն չէր [1]:

### **Հայ-վրացական հարաբերություններ, հայերի իրավական կարգավիճակը Վրաստանում XVIII դարի երկրորդ կեսին**

XVIII դարի երկրորդ կեսին հայերը, կազմելով Թիֆլիսի քաղաքային բնակչության երեք քառորդը [2], քաղաքային տնտեսության զարգացումը դիտում էին իրենց առաջնահերթ խնդիրներից մեկը, մեծապես շահագրգռված էին քաղաքի զարգացման, կառուցապատման ու բարեկեցության ապահովման հարցերով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայերը Թիֆլիսում շինարարական աշխատանքներ ծավալելու համար գումարներ էին հանգանակում բոլոր հայկական գաղթօջախներում, անգամ հնդկահայ: Դրամական ներդրումները կատարվում էին նաև Թիֆլիսի հայկական եկեղեցիներին օժանդակելու նպատակով [3]: Նման մի մուրհակով Թիֆլիսի հայոց Նորաշեն Սուրբ Աստվածածին եկեղեցու համար գումար է ստացել Հովսեփ Խատինի Դինեբեկյանցը՝ պարտավորվելով այն փոխանցել «նոյն եկեղեցոյն արաքերէց Տէր Առաքել Շմաւօնին, կամ յետ նորին ով որ արաքերէց լինին, տայ նոցայ» [4]:

Հայերի իրավական կարգավիճակը Վրաստանում պայմանավորվում էր ըստ Վրաստանի օրենսդրության՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ

ազգությունների մասին եղած հոդվածների: Կաշկանդիչ վերապահումների էին արվում թերևս միայն հայերի համար: Ազգությունների ներկայացման ժամանակ, Դավիթ Բագրատիոնի Արքայազնը (Վրաց իրավունքի և օրենքի տեսություն) աշխատության մեջ հայերի մասին գրում է. «Հայերը հիմնականում կազմում են վաճառական դասը, որոնք զբաղվում են առևտրական գործունեությամբ ինչպես երկրի ներսում, այնպես էլ Վրաստանից դուրս: Նրանք չեն վարում պետական ոչ մի պաշտոն, չեն ընդգրկվում զինվորական ծառայության մեջ: Ոչ մի դեպքում չեն լինում մոլորականներ (ավագ դատավոր, դատարանի նախագահ, տերմինը կիրառվել է XVI դարից), քանզի նրանք վաճառական ժողովուրդ են» [5]: Ըստ Ա. Ռոգավայի, նախորդ օրենսդրություններում ու իրավական հուշարձաններում բացակայում են այդ հոդվածները, և կասկածից վեր է, որ այդ հոդվածները մտցվել են դեռևս Հերակլի կողմից [6]: Շ. Մեսխիան նման վերաբերմունքը բացատրում է դասակարգային պայքարի առկայությամբ, թեև արձանագրել է, որ նման վերաբերմունք եղել է միայն հայերի նկատմամբ [7]:

Վրաց ազնվականության կողմից պարտադրվող կախումից խուսափելու համար հայ բնակչությունը նախընտրում էր Էջմիածնի հպատակ ներկայանալու միակ ուղին [8]: Էջմիածնի հպատակ կամ ճորտ էին գրվում անգամ այլոց ճորտությունից ազատվելուց հետո՝ նոր պարտադրանքների ենթարկվելուց խուսափելու նպատակով: Էջմիածնի ճորտագրումը առավել երաշխիքներ էր պարունակում նաև հետագայում ճորտությունից՝ ազատվելու համար [9]:

<sup>1</sup> Դիվան Հայոց պատմության, Գիրք I, Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1786–1792թ., էջ 531–533: «Ղուկաս կաթողիկոսը 1790թ. ապրիլի 15-ի կոնդակով հավաստում է Թիֆլիսում 7 տարի բնակվող կարնեցի Մուրատի որդի Մովսեսին Էջմիածնի ճորտ ընդունելու փաստը: Կոնդակում նշվում է Մովսեսի «ինքնահոծար կամօքն իւրովք» ճորտագրման հանգամանքը, - արձանագրվում է, թե «ահա զայս օրհնութեան եւ հաստատութեան նամակս առ քեզ գրեցաք ի միամտութիւն քեզ, որպեսզի ունիցիս զսա ի ձեռին քում նշան եւ կնիք հաստատութեան ի սրբոյ Աթոռոյս վասն ճորտութեանդ եւ յատկապէս ծառայութեանդ քոյ, զոր առնելոց ես սմա: Զի մի ոք իշխեսցէ այսուհետեւ զքան ինչ ունիլ ընդ քեզ, եւ կամ զիր ինչ պահանջել ի քէն՝ արտաքոյ կանոնաց Սրբոյ Աթոռոյս ճորտիցն, յորոց ոչ է օրէն պահանջել ինչ ումէք, որպէս է սովորութիւն ի բնէ անտի հաստատեցեալ



Թագավորական գերդաստանի հովանավորությանը արժանանալու համար, հայ բնակչությունը նախընտրում էր արքունի ճորտության կարգավիճակը: Միաձուլելով վրաց հասարակությանը, հայ բնակչությունը իր ազգային դիմագիծը պահելու համար դիմում էր առավելապես դավանական համախմբման միջոցին՝ կազմելով Հաղբատի հոգևոր թեմը: Վրաստանում հայ բնակչությունը ենթարկվում էր կամ ուղղակի Էջմիածնի Մայր Աթոռին և ներկայանում Հաղբատից առանձին համայք, կամ ընդգրկված էր Հաղբատի թեմի մեջ՝ որպես Վրաստանի «լիիրավ» բնակիչ [10]:

«Վրաց իրավունքի և օրենսգրքի տեսություն» աշխատությունում Դավիթ արքայազնը գրում է. «Վրաստանում գտնվող հայերը հոգևոր կառավարման տեսակետից բաժանվում են երկու թեմերի. Հաղբատի-Էջմիածնի, որոնցից Հաղբատը ենթարկվում է թագավորին, իսկ Էջմիածինը՝ Արարատյան Պատրիարքին, որի առաջնորդը նշանակվում է Պատրիարքի հավանությամբ, իսկ Հաղբատինը՝ ընտրում է թագավորը և միայն օժման համար ուղարկվում Պատրիարքի մոտ: Ըստ այդ էլ վերահսկվում էր, որպեսզի մեկ թեմը չկարողանա մյուսի նկատմամբ որևէ ազդեցություն ունենալ՝ ոչ կառավարման, ոչ ունեցվածքի, իսկ առավել ևս Էջմիածնի հովվապետի կողմից որևէ ճնշում ու հայց կատարել Հաղբատի եպիսկոպոսի ու հոգևորականության նկատմամբ» [11]:

XVIII դարի առաջին կեսին Հաղբատի թեմական կենտրոնը Գրիգոր եպիսկոպոս Սուրկունյանի առաջնորդության տարիներին, ունենալով Բեհբուդյան տոհմի աջակցությունը, զարգացում էր արձանագրել անգամ ինչպես Օսմանյան, այնպես էլ Նադիր շահի տիրակալության ծանր պայմաններում [12]:

---

արքունական թղթով: Որ եւ այսու կանոնաւ ոչ ումեք գոյ իշխանութիւն ի քէն իր ինչ պահանջելոյ, զի դու Սրբոյ Աթոռոյս եւ ճորտ եւ յատուկ ծառայ: Վասն որոյ զամենայն ճորտական տուրսդ, թէ հարկ եւ թէ մաքս, բոլորապէս պարտիս սրբոյ Աթոռոյս հասուցանել՝ ձեռամբ ի Սրբոյ Աթոռոյս յայգը նստող առաջնորդին»:

Ինչպես Թ. Ժորդանիան է արձանագրում. XVIII դարում հայերը կարևոր ուժ էին Վրաստանում: Պարսկա-օսմանական վարած քաղաքականության արդյունքում ճնշվեց վրացական հավատքը (ըստ XVIII դարի եկեղեցական փաստաթղթերի՝ Վրաստանում այսպես էին կոչում ուղղափառությունը), փոխարենը գավթիչները ամրապնդեցին հայ-մոնոֆիզիտ և կաթոլիկ եկեղեցիները: Վրաց բնակչության մի մասը՝ էթնիկ վրացիները, դարձան գրիգորյանականներ և կաթոլիկներ, ինչի պատճառով փոխվեց նրանց ազգային գիտակցությունը: «Վրացական հավատքի» համար հալածանքների ենթարկված վառ օրինակ է XVII-XVIII դդ. վրաց եկեղեցու քահանաների բռնի տեղահանումը կայսերական Ռուսաստան: Շատ թեմեր վերացվեցին, թալանվեց եկեղեցական գույքը, սասանվեց եկեղեցու կարգուկանոնը, 9 եպիսկոպոսները, որոնք փաստացի մնացել էին առանց թեմի, Վախթանգ VI-ի հետևից լքեցին Վրաստանը և տեղափոխվեցին Ռուսաստան [13]:

1747թ. Նադիր շահի սպանությունից հետո երկրում խառնաշփոթ է առաջանում: Դրանից օգտվելով՝ Իրանի հյուսիսում ժամանակին գոյություն ունեցող Երևանի, Ղարաբաղի, Շամախիի ու Թավրիզի կուսակալությունների փոխարեն թյուրքալեզու մի քանի ցեղեր Օսմանյան կայսրության օժանդակությամբ տարածքը բաժանում են 20-ից ավելի խանությունների ու 10-ից ավելի սուլթանությունների միջև: Ստեղծված քաղաքական անկայունությունը և ռազմական բախումները ստեղծել էին ռազմա-քաղաքական և տնտեսական ծանր վիճակ. «բնակիչք գաւառաց և աշխարաց, աւանաց և գիւղօրէից կողմանցս խոյս տուեալ՝ ամրանային յամուրս լերանց և ձորոց և յայրս քարանձաւաց»: Նման իրավիճակում Հաղբատի առաջնորդը ևս անվտանգության նկատառումներից ելնելով փոխադրվեց Թիֆլիս՝ մշտական բնակության, մասնակից էր դառնում դավանական, միջեկեղեցական հակամարտություններին, որոնք գլուխ էին բարձրացրել Վրաց մայրաքաղաքում՝ ինչպես հայոց, այնպես էլ վրաց եկեղեցիների մեջ [14]<sup>2</sup>:

<sup>2</sup> Յովհաննու Ղրիմեցույ, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա 1965, էջ 116:

Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսը հայոց հետագա պառակտումը կանխելու և Էջմիածնի վերահսկողությունը ուժեղացնելու նպատակով Հաղբատի և Սանահինի առաջնորդներին հրավիրում Էջմիածին հատուկ կոնդակով Վրաց պետության մեջ եղած ողջ հայ բնակչության վերահսկողությունը դնում Թիֆլիսում Էջմիածնի առաջնորդի իրավասության ներքո: Փաստորեն, միավորելով այդ աթոռներն այն դարձնում էր տերունի:

Բնականաբար հարուցում է կաթողիկոսությանը հարած Վրաց Անտոն Ա-ին կաթողիկոսի դժգոհությունը: Այս իրադարձությունների պայմաններում էր, որ Վրաց եկեղեցում ևս տեղի ունեցավ հանգուցալուծում: Հերակլի հրամանով 1755թ. դեկտեմբերին հրավիրված եկեղեցական ժողովը կարգալույծ է անում Թեյմուրազ թագավորի քրոջ որդուն՝ կաթողիկոս Անտոն Ա-ին [15]:

### **Վրաստանի կաթողիկոս Անտոն Ա-ի հարաբերությունները և հայ հոգևորականները**

Վերոնշյալ 9 եպիսկոպոսների և կաթողիկոս Անտոն Ա-ի Ռուսաստանում հաստատվելու փաստը հստակ ցույց է տալիս այն սարսափելի դժվարությունները, որոնք բաժին են ընկել վրաց եկեղեցուն XVIII դարի առաջին կեսին: Այս ծանր ժամանակներում էր, որ Մխիթարյանների աշխատություններով հարստացած հայ եկեղեցին Ղազար կաթողիկոսի գլխավորությամբ զինված ուսումնագիտական գրականությամբ դուրս եկավ վրաց եկեղեցու դեմ և սկսեց միաբնակություն տարածել: Կարող ենք փաստել՝ արձանագրում է Թ. Ժորդանիան, որ հայ եկեղեցին աստվածաբանական կրթությամբ ավելի բարձր էր, քան վրացականը: Իտալիայում ձևավորված կաթողիկ Մխիթարյան համայնքը հայ եկեղեցին հարստացրել էր նոր թարգմանական և ինքնատիպ գրականությամբ: Ոչ միայն Ժորդանիայի, այլև վրացի այլ գիտնականների կարծիքով վրաց քահանաներն անգոր էին Մխիթարյանների կրոնաիդեալիստական փիլիսոփայության և գիտական ուսմունքի առաջ [16]:

1760թ. Թիֆլիսում աստիճանաբար թուլանում են եկեղեցա-դավանական հակամարտությունները, և Հերակլ II Վրաստանում որդեգրում է նոր քաղաքական ուղի, վերադառնում է նաև կաթողիկոս Անտոն Ա-ը

և կրկին գրավում կաթողիկոսական աթոռը [17]: Հերակլ II վարած քաղաքականությունը վրաց պատմագրության [18] մեջ որակվում է որպես Վրաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման արդյունք ի տարբերություն Թեյմուրազ թագավորի որդեգրած քաղաքականության, տարբերվում էր իր համարձակ խնդիրների կարգավորմամբ, նոր ուղղվածությամբ սկսում է իր դրսևորումներն ունենալ նաև հայերի և հայ եկեղեցու հետ նրա հարաբերություններում: Հերակլի պահանջներին երբեմն ստիպված էին տեղի տալ Էջմիածնի կաթողիկոսները, նա նույնիսկ ազատում էին կարգազանց հայ հոգևորականներին, սակայն միշտ չէ որ հնազանդ հանդուրժում էին Վրաց թագավորի հայ եկեղեցականների գործերին միջամտությունները, ինչպես նաև հեռակա կարգով Հաղբատի առաջնորդ նշանակելու նրա պահանջը: Այս հակասությունները Վրաց արքունիքի և Հայոց կաթողիկոսի միջև էին:

Լինելով Վրաց արքայի հարկատու Երևանի խանության տարածքում, Հայոց կաթողիկոսանիստ Էջմիածինը ևս ընդգրկվում էր Հերակլի և խանի միջև հարաբերությունների ոլորտ [19]<sup>3</sup>: Հաղբատի և Էջմիածնի միջև հակասություններն ավելի էին սրվում, Հերակլը նպաստում էր Հաղբատի թեմի ընդարձակմանը, բնականաբար ի հաշիվ Սանահինի և Հաղարծնի վանքերի: Նույնիսկ Հաղբատի թեմից արտաքսված հոգևորականները կաթողիկոսի կարգադրությամբ պաշտպանություն էին գտնում Էջմիածնի թեմում: Այս կապակցությամբ արձագանքում է Ղազար Ջահկեցի [20]<sup>4</sup> կաթողիկոսը, - «...կոնդակ է տուեալ յանուն սրբոյ վանիցն՝ Հախապա-

<sup>3</sup> Բայց զի եթէ զբանս խանին և սոցա ոչ հաւանիցիս և ոչ հաւատայցես, և ոչ կամիցիս տիրութիւն առնել երկրիս մերոյ և խանին՝ հասարակապէս, այլ խնդրեմ ի ճշմարիտ բարեկամեդ մերմէ, զի յատկապէս սակս Սրբոյ Աթոռոյս ազատութեանն պարտիս նախապէս հոգալ և զհնարս գտանել և առնել փութով և ոչ զանց առնել:

<sup>4</sup> Ղազար Ա Ջահկեցի (Ջանկեցի) (1737–1751) Ամենայն Հայոց կաթողիկոս 1737թ., Անտոն կաթողիկոսի ժամանակակիցը, սխոլաստիկ վարդապետության նվիրյալ ցուցամոլ մոնոֆիզիտը: Սխոլաստիկ աշխատություններով հայերը զգալիորեն գերազանցեցին վրացիներին, Այդ զենքերը կիրառեցին

տու, նորին պատճենն, այսինքն՝ սուրաթն աստ տեսաք, որ բաց ի Բամբակաձորոյ, գամենայն վերոգրեալ թէմսն յանուն Հախպատա վանիցն էր յատկացուցեալ և զվանքն Սանահնու զրկեալ իսպառ» [21]:

Վրաց արքունիքում ծառայության անցած հայազգի գործիչները ստիպված էին Էջմիածնի նկատմամբ որդեգրել այնպիսի քաղաքականություն ու վերաբերմունք, որը թելադրում էր Վրաց արքունիքը: Հաճախ հայազգի գործիչները, որ պաշտոնի բերումով մեծ ազդեցություն էին ձեռք բերել վիրահայ միջավայրում՝ Թիֆլիսում, հակասությունների մեջ էին հայտնվում Էջմիածնի գործիչների հետ: Էջմիածնի հետ հարաբերություններում առավել անխոչընդոտ վերաբերմունք էր պահանջում Սիմեոն Երևանցին Թիֆլիսի մելիք Ավետիքից և նախատում նրան՝ իր իսկ վերաբերմունքը այսպես ասած հիմնավորող պատճառաբանությունների համար. «... դու ևս եթե զբնական կարգն պահեսցես, արքայն քեզ զի՞նչ է ասելոց»: Սիմեոն Երևանցու կողմից մելիք Ավետիքին ուղղված նամակում ուշագրավ է ոչ միայն այն նախատինքը, որ հայոց կաթողիկոսին վրացերենով էր գրել նամակ, այլև համառոտագրման մեջ եղած այն նշումը, թե «...Քանզի և օգուտ իսկ էր սմա գանգատելն մեր Արքային զինքենն», այսինքն՝ Հայոց կաթողիկոսի դժգոհությունը մելիք Ավետիքից վրաց արքայի մոտ կարող էր բարձրացնել մելիքի հեղինակությունը [22]: Այս ամենը վկայություններ են՝ Հայոց կաթողիկոսի և Վրաց արքայի միջև, որոնք իհարկե ոչ միանշանակ հարաբերությունների մասին են:

---

վրաց եկեղեցու դեմ: Երկրի քաղաքական ծանր վիճակին ավելացավ եկեղեցական դժվարություններն ու կրոնական քայքայումը: Ըստ Տիմոթեոս արքեպիսկոպոսի. «հայ խելացի ու հմուտ քարոզիչները գայլերի պես ներխուժեցին Վրաստան՝ առնանգելու Քրիստոսի հոտը»: Երկրում հայ հավատքի տարածումն այնքան մեծ էր, որ շատ վրացիներ դարձան մոնոֆիզիտ, իսկ վրաց ուղղափառ եկեղեցին իր շինություններով դարձավ մոնոֆիզիտ քահանայի հոտն ու կալվածքը: Հայոց կաթողիկոս Ղազար Ա Ջանկեցին որոշում է անձամբ ինքը վրաց եկեղեցում մոնոֆիզիտություն քարոզել և վրաց կաթողիկոսին համոզել հայ եկեղեցու ճշմարտացիության մեջ:

**Անտոն կաթողիկոսի հեղինակած «ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆԵՆՆԵՐԻ» «ՀԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (ԲԱՌԱՅԻՆ՝ «ՊԱՏՐԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԵՄ ԿԱՅ ՄՈՆՖԻԳԻՏՆԵՐԻ:**

Հայոց դավանական պատկանելության և ազգային նկարագրի արտահայտման դեմ անթույլատրելիության մասին վկայող ուշագրավ աշխատություն է Անտոն կաթողիկոսի հեղինակած «ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆԵՆՆԵՐԻ» [23]<sup>5</sup> «Հասկանալի» (բառացի՝ «Պատրաստաբանություն»):

Ինչպես Թ. Ժորդանիան է նշում. «Վրաց եկեղեցու դժվարությունները, աստվածաբանական գրքերի բացակայությունը Անտոն կաթողիկոսին ստիպեցին աշխատել լատին և հայ գիտնականների հետ, իսկ վրաց աստվածաբանական գրականության բացակայությունը, նրա կարծիքով, ժամանակավորապես ճիշտ ճանապարհից շեղվել էր [24]<sup>6</sup>: Անտոն կաթողիկոսը մոնոֆիզիտների դեմ սկսեց պայքարել գիտականորեն: Նախ դիմում է Վրաստանի կաթողիկոս գիտնականներին, որպեսզի ուսումնասիրի հայերեն և լատիներեն, նրանց օգնությամբ ձեռք բերի լատիներեն և հայերեն գիտական նյութեր, որոնք օգտակար կլինեին մոնոֆիզիտներից և կաթողիկոսներից ուղղափառ հավատքը պաշտպանելու համար: Եվ 1752թ. Անտոն կաթողիկոսը զոհաբերելով իր առողջությունը, քրտնաջան աշխատանքի արդյունքում ավարտեց աստվածաբանության վերաբերյալ իր ծավալուն աշխատությունը, որտեղ ներկայացնում

<sup>5</sup> Դավանական ընդդիմախոսական մեծածավալ երկ է «Հասկանալի»-ը (բառացի՝ «Պատրաստաբանություն», 3 գիրք՝ գրված 1750-1752, հրտ. 1892), որի Բ գրքի IV եվ Գ գրքի XXIII գլուխները վերաբերում են հայերին: Ուշագրավ են նրա թարգմանությունները հայերենից՝ Թիֆլիսի Հայոց կաթողիկոս (այժմ՝ Ս. Գևորգ) եկեղեցու միաբան Փիլիպպե քահանա Ղայթմազաշվիլու աշխատակցությամբ («Եփեսոսի պատմություն», թրգմ. 1776, Կյուրեղ Աղեքսանդրացի, «Գանձ», թրգմ. 1788, «Քերականություն», որը Մխիթար Սեբաստացու «Քերականություն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի», 1730, գրքի թարգմանությունն է):

<sup>6</sup> «Մենք՝ վրացիներս, ասում է Անտոն կաթողիկոսը, հնուց ի վեր ունեցել ենք ամեն ինչ՝ անցյալից մինչև հեզ նվաստացում, սակայն շատերը ապականվել և չարաշահվել են անձնական կրքերից և Սուրբ եկեղեցին ուղղում էին դեպի արևելք»:

է մոնոֆիզիտ վարդապետության համակարգի գիտական մերժումը: Աշխատության հրապարակումով կաթողիկոսի և վրաց ուղղափառ հոգևորականության դեմ են դուրս գալիս ոչ միայն վիրահայ մեծահարուստներն ու հոգևորականները, այլև վրացի որոշ հոգևորականներ: Վերջիններս Անտոն կաթողիկոսին մեղադրում էին կաթոլիկ լինելու մեջ, կաթոլիկ պապերի հետ մտերիմ լինելու համար, սակայն ինչպես աղբյուրներն [25] են վկայում, վերջինիս մտերմությունը կաթոլիկ միսիոներների հետ եղել է միայն կրթական և գիտական նպատակներով: Նրա կարևորագույն առաքելությունն էր կաթոլիկությունը դատապարտող գիրք գրել վրացերենով, քանի որ նրան չեն բավարարել այդ թեմայով մինչ այդ եղած Բեսարիոն կաթողիկոսի և Եվկրատ Նիկեելի վրացերեն աշխատությունները:

Անտոն կաթողիկոսի մասին Թ. Ժորդանիան արձանագրում է նաև հետևյալը. կաթողիկոսի առաջին խնդիրը իր գահակալության առաջին տարիներին եկեղեցում վարչական կարգեր հաստատելն ու նախորդ դարաշրջանում առաջացած անկատարությունները վերացնելն էր: Վրաստանի միասնության կազմալուծումը նպաստել էր եկեղեցական տարանջատմանը: Եվ նա սկսեց վերականգնել երերուն եկեղեցական կարգը՝ տուգանքներ սահմանեց, որոնք պետք է վճարվեին եկեղեցական օրենքները խախտող քահանաները: Հոգևորականներից այնքան մեծ տուգանքներ էին գանձվել, որ դարձել էր եկեղեցու եկամուտների աղբյուրներից մեկը: Արգելված և քահանաներին Անտոնը անվանում էր «արյուն խմողներ» [26]:

Անտոն կաթողիկոսի վերադարձից հետո, հաստատվում է եկեղեցական նոր օրենք, հիմնում է նոր ինստիտուտ՝ «dicasteria» եկեղեցու ունեցվածքը հուսալիորեն պաշտպանելու համար: Վերականգնում է եկեղեցական կարգապահությունը, կենտրոնական եկեղեցական իշխանության ամրապնդումը սահմանափակում հատկապես այն հոգևորականների լիազորությունները, ովքեր աշխատում էին իշխանական կալվածքներում և կենտրոնամետ նկրտումների պատճառով չէին պաշտպանում եկեղեցու և պետության շահերը:

### Եզրակացություն

Առհասարակ հայ-վրացական եկեղեցական հարաբերություններին առնչվող թեման այնքան ընդգրկուն է, որ դժվար թե մեկ հոդվածով հնարավոր լինի հանգամանորեն անդրադառնալ XVIII դարի խնդրո հարցին:

Այնուամենայնիվ, ամփոփելով, կարող ենք ասել, պատմականորեն հայ և վրաց ժողովուրդներն իրենց պետականությունները ստիպված են եղել կերտել մշակութային և ազգային ինքնության պահպանման համար մղվող պայքարում: Իհարկե, այս իրողությունն իր հետքը չէր կարող չթողնել հարաբերությունների վրա, ստեղծելով ընդհանուր ճակատագրի և փոխադարձ պատասխանատվության գերակայություն:

Այսպիսով, համառոտ անդրադառնալով XVIII դարի հայ-վրացական եկեղեցական հարաբերություններին, որոնք ընդհանուր առմամբ կրում էին մեղմ ասաց ոչ բարեկամական բնույթ և հարկ է նշել, որ դրանք հեռու էին անխափան զարգացնելու համար անհրաժեշտ մակարդակից: Մասնավորապես Հերակլ II-ի օրոք, եկեղեցական հարաբերությունները սրվեցին Անտոն Ա կաթողիկոսի և հայ հոգևորականների միջև: Քանի որ, ըստ վերջինիս, Վրաստանի միասնության կազմալուծումը նպաստել էր եկեղեցական տարանջատմանը: Եկեղեցական անջատողականությունը ի կատար էր ածվում քաղաքական հայացքների քարոզներով, որին մասնակցում էին ոչ միայն հայ, այլև վրացի հոգեվորականները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Կարապետյան Ս.* Թիֆլիսի քաղաքագլուխները, Եր., 2003, էջ 7:
2. *Ն. Յակոբով,* Սանկտորուո մոսկով, Վոցնո II, տծոլոսո 1925 Վ. ճՅ. 27–104:
3. ՄՄ, ձեռ. 10756, թ. 10ա: «Կառավաչիք որբոցն» էին այդ ժամանակ Նազար Հակոբջան Աղա Շահամիրյան, Մահակ Աբրահամյանը – Մէթ Մամյանը:
4. ՄՄ, ձեռ. 10756, թ. 9ա: Մուրհակը ստացել են «կառաւարիչք Մադրասիս որբոց Մարութ Յօսէփ-Յակոբ Յարութին Մէթ Տէր Աւետիս»:
5. *Ճաջօտ Յաջրատօնօ,* Տախարօջալօս Տամարօլօսա Ճա ՅանօնօմՃօլօՃնօլօմօս մօմօնօլՅա, տծ. 1959. ճՅ. 140.



6. *Розава А.А.* Зачатки капитализма в Грузии политика Ираклия II. Тбилиси, 1974. СС. 36–37.
7. *Յոთա մեսեռ*, საისტორიო ძიებანი, ტომი I, 1982 წ., გვ. 397–399.
8. Դիվան Հայոց պատմության, Գիրք I, Հատոր Ա: Էջ. 254–257:
9. Դիվան Հայոց պատմության, Գիրք I, Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1786–1792թթ., էջ 531–533:
10. Դիվան Հայոց պատմության, Գիրք I, Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1893 թ., էջ 535:
11. *დავით ბაგრატიონი*, საქართველოს სამართლისა და კანონმცოდნეობის მიმოხილვა, თბ. 1959. გვ. 232–233.
12. *Յովհաննու Ղրիմեցոյ*, Պատմութիւն հոյակաւոր վանից Հաղբասայ Ս. Նշանին, Վիեննա 1965: էջ 114:
13. *տ. Ժորდանია*, ანტონ I, საღვთისმეტყველო კრებული, №1, 1991, გვ. 36:
14. *Յովհաննու Ղրիմեցոյ*, Պատմութիւն հոյակաւոր վանից Հաղբասայ Ս. Նշանին, Վիեննա 1965, էջ 116:
15. *Լ. Մելիքսեթ Բեկ*, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Եր., 1956, էջ 109:
16. *տ. Ժորդանია*, ანტონ I, საღვთისმეტყველო კრებული, N1, 1991, გვ. 44:
17. Ե. მთვარელიშვილი, ანტონ I, თბ., 2010 წ., გვ., 20.
18. *ნიკო ბერძენიშვილი*, მამისა ბერძენიშვილი, დოკუმენტები თბილისის ისტორიის XVI-XIX სს, წიგნი 1, თბ., 1962 წ., 204 გვ., პაპუნა ორბელიანი, ამბავი ქართლისანი, თბ., 1981წ. გვ., 208.
19. ՄՄ, ձեռ. 2911, թ. 57ա:
20. *տ. Ժորդանია*, ანტონ I, საღვთისმეტყველო კრებული, N1, 1991, გვ. 77–78:
21. ՄՄ, ձեռ. 3031, թ. 231բ–232բ:
22. ՄՄ, ձեռ. 4479, թ.194–195:
23. Ժველი ქართული აგიოგრაფიული ძეგლები, VI, ტექსტი გამოსცა და გამოკვლევა დაურთო մ. Կავთარიამ თბილისი, 1980., Ե. მთვარელიშვილი, ანტონ I, თბ., 2010 წ., გვ., 221–227.
24. *մ. Կავთარია*, XVII საუკუნის ქართული საზოგადოებრივი აზროვნების ისტორიიდან, თბილისი, 1977., 35 გვ.
25. *Ե. მთვარელიშვილი*, ანტონ I, 2010, გვ. 20. თბ. 2010, გვ.221-227, տ. Ժորդանია, ანტონ I, საღვთისმეტყველო კრებული, N1, 1991, გვ. 80, Կ. Կեքელიძე, IV, 1957, გვ.179.
26. *տ. Ժորդանია*, ანტონ I, საღვთისმეტყველო კრებული, N1, 1991, გვ. 36:

## АРМЯНО-ГРУЗИНСКИЕ БОГОСЛОВСКИЕ ОТНОШЕНИЯ В XVIII ВЕКЕ

*Дж.Т. Тамарян*

### АННОТАЦИЯ

В статье представлены проблемы армяно-грузинских богословских отношений в XVIII веке. Учтены вопросы религиозного, языкового, национального, а также этнического самосохранения, проанализированы многослойные взаимоотношения двух церквей, а именно:

- правовой статус армян в Грузии;
- влияние российского фактора на армяно-грузинские отношения;
- зависимость, навязанная грузинской знатью;
- то, что Антон I и епископы поселились в России;
- политика, проводимая Ираклием II в грузинской историографии в свете развития капиталистических отношений в Грузии;
- Армянский Эчмиадзин был налогоплательщиком грузинского царя;
- отношение к Эчмиадзину армянских деятелей, служивших при грузинском дворе;
- взаимоотношения католикоса Антона I и грузинского духовенства.

В целом, тема, связанная с армяно-грузинскими церковными отношениями, настолько обширна, что в рамках одной статьи вряд ли возможно всесторонне рассмотреть проблему XVIII века.

Однако, подводя итоги, можно сказать, что исторически армянскому и грузинскому народам приходилось строить свою государственность в борьбе за сохранение культурной и национальной идентичности. Конечно, эта реальность не могла не оставить свой отпечаток на отношениях, создав преобладание общей судьбы и взаимной ответственности.

Таким образом, кратко говоря об армяно-грузинских церковных отношениях XVIII века, которые, в целом, были мягко говоря недружественными, следует отметить, что они были далеки от того уровня, который необходим для непрерывного развития. В частности, в период правления Ираклия II обострились церковные отношения между католикосом Антоном I и армянским духовенством. По словам Антона I, распаду единства Грузии способствовал церковный раскол. Церковный сепаратизм осуществлялся проповедями политических взглядов, в которых участвовали не только армянские, но и грузинские священнослужители.

**Ключевые слова:** Армения, Католикос, Грузия, монофизит, Эчмиадзин, Ереванское ханство, католики.

**ARMENIAN-GEORGIAN INTER-DENOMINATIONAL  
RELATIONS IN THE 18TH CENTURY**

*J. Tamaryan*

**ABSTRACT**

The article presents the Armenian-Georgian theological relations in the 18th century as a problem.

Issues of religious, linguistic, national, and ethnic self-preservation were taken into account, multi-layered relationships between the two churches were analyzed, namely:

- the legal status of Armenians in Georgia;
- the influence of the Russian factor on the Armenian-Georgian relations;
- dependence imposed by the Georgian nobility,
- The fact that Anton I and the bishops settled in Russia;
- The policy pursued by Heraclius II of Georgia historiography as a result of the development of capitalist relations in Georgia;
- Armenian Etchmiadzin was the taxpayer of the Georgian king;
Խոսելով Ա. Այվազյանի ստեղծագործության լեզվաոճական առանձնահատկությունների մասին՝ անհնար է չառանձնացնել այն փաստը, որ հայ գրականության մեջ առաջացավ մի նոր՝ այվազյանական լեզու, որը երբեք չի կարելի շփոթել մեկ այլ գրողի ստեղծագործության հետ, քանզի Ա. Այվազյանի ստեղծագործության լեզուն և ոճը առանձնանում են բարձր արվեստով, լեզվաոճական հնարքներով և հարուստ բառապաշարով: Ահա փոքր արձակի մեկ այլ ստեղծագործություն՝ «Կիրակոսը» պատմվածքը: Երկխոսությունները, մակդիրները, չափազանցությունը հետաքրքիր երանգ են հաղորդում պատմվածքին: Կերպարների երկխոսության միջոցով հեղինակը ներկայացնում է չարագործներին, ժողովրդի դահիճներին, որոնք արժանի են միայն խղճահարության, որովհետև իրենց արարաքներով ոչնչացրել են Կիրակոսի մարդկայնությունը». - Իսկ 15 թվակա՞նը... Այդ անխելքները ինչքան պետք է տանջվեն, որ վնասվածք են հասցրել Կիրակոսի մարմնին... Ախր երբ մարդ մարդուն վնասում է, ցավում է Կիրակոսի մարմինը...» [12]:

Անմիջական ու անկեղծ կերպար է «Թիֆլիսի ցուցանակները» պատմվածքի հերոսը: Գրիգորը չի կարողանում ապրել անորոշության մեջ: Նրա ինքնատիպ ցուցանակները զարդարում են ողջ քաղաքը: Այդ ցուցանակները նրա անկեղծության արտացոլումն են: Գրիգորը բարի

էր և ցանկանում էր ուրիշներին էլ այդպիսին դարձնել: «Բոլորին սիրում էր Գրիգորը, լավ մարդիկ էին, ուտում-խմում էին, ուրախ էին, կովում էին, ուրախ էին, տխուր, մեկ-մեկ լաց էին լինում, երգում էին... Ասես բոլորը ինքը լինեք...» [13]: Այվազյանի հերոսն ապրում էր «ներքին ճշմարտության պահանջով. դա միակ փաստն էր նրա գոյության»: Այս պատմվածքում հեղինակը շատ է դիմում չափազանցությունների, որոնք կերպարը ավելի ինքնատիպ ու անկեղծ են դարձնում. «Գրիգորը ապրում էր իր խելքով ու նրա անկեղծությունը փովել էր Թիֆլիսով մեկ. նա նկարել էր ցուցանակներ միկլիտանների դռներին, վարսավիրանոցների ապակիներին, դուքանների վրա...» կամ «Նրա խենթ սերը թառեց հիվանդանոցների ճակատին, փողոցների լապտերների, եկեղեցիների պատերին, չարչիների խանութներին... Թիֆլիսի արյան շրջանառությունն արագացավ...» [14]: Գրիգորն իր ապրելակերպով, իր անկեղծությամբ լույս էր սփռում Թիֆլիսի վրա, բայց մի օր, երբ նա հավաքում է քաղաքի ցուցանակները, մարդիկ սկզբում չեն էլ նկատում, քաղաքն էլ ասես «հորանջում էր»: Բայց հետո սկսում են որոնել Գրիգորի ցուցանակները ու չեն գտնում: Նոր ցուցանակներն էլ չէին փոխարինում Գրիգորի հումորով, ազատ ու պարզ ցուցանակներին: Մինչև հիմա էլ ամենուր նրանք փնտրում են՝ հույս ունենալով վերադարձնել անկեղծությունը:

Այվազյանի նորաստեղծ բառերն ու արտահայտություններն արտացոլված են հատկապես «Մեր տխրությունը Կեժոյի շուրջ» պատմվածքում: Կերպարը ամբողջական է դառնում հենց այդ բառերի ու արտահայտությունների շնորհիվ: Կեժոն քավության նոխազի մի տիպ է, ինչպես հեղինակն է ասում... որ հատվածում է մնացել Կեժոյի կերպարանքը. ինչ-որ մի տեղ, բոլորովին առանձին, գործ չունենալով ոչ ոքի և ոչնչի հետ, նա հաստատում մշտնջենական մի ճշմարտություն... [15]: Նորաստեղծ բառերի և մակդիրների մի ամբողջություն՝ «ոստայնանկվում է աստծո մարմնի հյուսվածքը, գործվագեղ ժպիտ, զվարթահայաց ժպտում է, ժպտաշուրթ նայում, վատամոռաց ու բարեսիրտ, Կեժոյի կարգիության մեջ, շուտափութելով, Կեժոյի տազնապոտ ձայնը, հաճոյաժպտաց, անձպտուն, Կեժոն առավոտվանից խորդանոցում էր



մրջնանում, քաղցրախոս ու քաղցրավարք, փութաքայլ, մանկական հոգսերը արևահար էին, քամատար, աղմուկի և հնչյունների լուսավորչու մեջ...»: Սրանք հիմնականում օգտագործվում են գլխավոր հերոսուհու՝ Կեծոյի կերպարը նկարագրելիս: Կեծոն առավոտից երեկո աշխատում էր քրոջ ընտանիքի համար, երբեք չէր տրտնջում, ինչն էլ երբեմն բարկացնում էր մարդկանց: Կեծոն բարության լույս էր սփռում: Հեղինակի կարծիքով «...աստված երկիր է ուղարկում կեծոներ՝ գթառաս ու ժպտաշուրթ, ներողամիտ ու համբերատար, չարությանը բարիով պատասխանող, քչապահանջ ու անպաշտպան, որպեսզի նրա միջոցով ստուգի մեզ, հայտնաբերի մեր միջի չարիքը, ՄԵՂԱՎՈՐԻՆ» [16]:

Այվազյանի արձակում առանձնանում են նաև կանացի կերպարները: Կին հերոսները լուռ են, համբերատար, բայց կարողանում են ուղղորդել տղամարդկանց: «Պորտը վրան» պատմվածքը սկսվում է հերոսուհու՝ Մարթայի ծննդաբերության նկարագրությամբ: Ինչպես հեղինակն է գրում. «Մարթան մանկաբերում էր մենակ. ինքն իր մեջ, իրենից, քրտնաչարչար, իր աշխատանքով...Ծնում էր ինքը և գործ չուներ ոչ մարդկանց և ոչ Աստծո հետ...» [17]: Որդու՝ Մարտունի ծնունդից հետո Մարթան իր ողջ կյանքում լուռ ու համբերատար կրում է իր խաչը: Բայց այդ խաչը կրելու պատրաստակամությունը չարիք է բերում: Նա ողջ կյանքում մաքառում է մենակ, որդուն մեծացնում է մենակ և ցանկանում է, որ աշխարհում իրենից բացի ոչ ոք չսիրի Մարտունին: Նա միայն մի գործ ուներ՝ Մարտունը, ու լուռ, ինքն իր հետ զբաղվում էր իր զավակով: Պատմվածքի երկու կերպարներին՝ մորը և որդուն նկարագրելու համար Այվազյանը դարձյալ օգտագործում է անձնավորումն ու Այվազյանական հարուստ բառապաշարը՝ «մեծալրջություն, ցնծկոծում էր անտրամաբանությունից, բացապարզել, քրտնաչարչար, թշվառաքրտինք ընտանիք, ջղաձգվում էր օդը, սենյակի օդը ջղեր ուներ, ցավում էր սեղանը, նա փայտե դեղնավուն ցավ ուներ, ցավում էր վերմակի եզրը, ցավում էր օդը, ցավում էր մահճակալը, ցավում էին պատերը, անհամա-ցավ նրանց հարաբերությունը, սենյակի օդը կարկամել էր, Դուխիկը վախենում էր քսվել օդին...»:

Մեկ այլ՝ «Ծեր Եպրաքսին և նրա տարեց տղան» պատմվածքի հերոսուհին նույնպես մենակ անձայն զրուցում է, իր հոգսերն ու ցանկությունները պատմում է չուզունե տապակին, դանակին, մսադացին, իր ծոմոված եղունգներին: Նրա քառասունհինգամյա որդին իրեն համարում է ամենադժբախտը, նա ոչ մանկություն է ունեցել, ոչ երիտասարդություն, ոչ ընտանիք: Ու կարծում է, որ տասնյոթ տարեկանում մահանար, ավելի լավ կլիներ: Հետո իրեն մխիթարում է, որ ասենք պատերազմի ժամանակ է մահացել: Նա հիվանդության պատճառով տասը տարի տանից դուրս չի եկել: Մայրը հանգիստ ու համբերատար մխիթարում է որդուն՝ ասելով, ասենք թե քանտում է նստած եղել: Եպրաքսին կրկին ինքն իրեն մտմտում է ու պատկերացնում իր մահը, թաղումը, որոնք կմնան աշխարհի հիշողության մեջ...

Այվազյանի հերոսները աչքի են ընկնում հոգեբանական բարդ դրսևորումներով: Նրա հերոսները ձգտում են դեպի մարդը, և այդ ձգտումը հեղինակը ներկայացնում է տարբեր իրավիճակներում՝ երբեմն երևակայական, երբեմն իրական, երբեմն էլ հեքիաթային: «Հեքիաթը» պատմվածքի հերոսուհին մերկ կինն է, որի ետևից գնում է տղամարդը: Նա իր սրտում վախ ունի, որ իրենից կխլեն կնոջը, կկորցնի նրան: Իսկ երբ ուզում է փրկել նրան, իրեն էլ են ծեծում, տապալում գետնին: Այս պատմվածքում ընթերցողը տեղափոխվում է մի երևակայական աշխարհ, որտեղ կատարվող գործողությունները ներկայացվում են համեմատություններով ու հետաքրքիր մեկնաբանություններով: «...Փողոցները աստղաձև սկսվում էին հրապարակից, բարձրանում վեր ու վերածվում քարքարոտ լեռան: Այսպես բոլոր փողոցները՝ հրապարակից՝ փողոց էր, բարձրանում էր և վերջանում ժայռի ծայրով: Չագարի նման, որի եզրը սողցի կերպարանք ուներ» [18]: Կամ «Մերկ կինը անվնաս շարժվում էր: Նա մոտեցավ ժայռին և արդեն նրա մարմինը հորիզոնի գծի վրա էր» [19]:

Այն օրերին, երբ Օրթաճալայի («Մուրբ ճշմարտություն») զվարճության վայրի երեսուներկու գեղեցկուհիները հանգստյան օրը դուրս են գալիս զբոսանքի, Ճիպոնն իր հանգիստը կորցնում է: Գիշերը Ճիպոնն

կույզ է գալիս իր նկուղում ու լալիս: Նրա լացը տարօրինակ էր ու զարմանալի: Ճիպոռոյի աչքին երեսուններկու անամոթներից բացի այլևս ոչինչ չի երևում: Այս պատմվածքում հեղինակը շոայլորեն օգտագործել է կրկնությունները՝ ավելի պատկերավոր ներկայացնելով իր հերոսին: «Ու երբ այդ երեսուններկու գույնզգույն աղջիկները մտնում էին նրա ծխոտ-մխոտ արյան մեջ, Ճիպոռոն հիշում էր իր հորը՝ լաց էր լինում, հիշում էր իր մորը՝ լաց էր լինում, հիշում էր իրենց կարկատան տունը՝ լաց էր լինում... Ինչքան պիտի փող հավաքես կոպեկ-կոպեկ, որ հինգ մանեթ ունենաս: Էդ ինչքան կոպեկ է, տո, էդ հինգ մանեթը... Էդ ինչքան խելոք է ուրեմն պարոն Թամամշևը, որ էդքան փողը կարող է հաշվել...» [20]:

Ու Ճիպոռոյի մեջ գլուխ է բարձրացնում արյան կանչը: Նա խոսում է իր արյան հետ, հարվածում իր մարմնին: Անելանելի վիճակում հայտնված Ճիպոռոն քայլերն ուղղում է դեպի եկեղեցի, բայց այստեղ էլ խաբում է տերտերին այնքան բնական, որ տերտերը հավատում է նրան ու կարեկցում: Ճիպոռոն ինքն էլ հավատում է իր ասածների ճշմարտությանը, իսկ տերտերը չի զգում Ճիպոռոյի Թիֆլիսյան գոեհիկ խոսքերը, հայհոյանքի հոտ ունեցող, հազի ու խոմփոցի նման բառերը:

Այվազյանի փոքր արձակին բնորոշ է նաև հերոսների տազնապների բացահայտումը: «Տազնապներ» պատմվածքը սկսվում է հետաքրքիր նկարագրությամբ. «Աղոթքներն ու անեծքները մի կաթսայում էին եփվում, խաշվում, բլբլթում էին ու եռման կետում մի մարմին դառնում, մի իմաստ ստանում, մի անունով կնքվում՝ Չուղուրեթ» [21]: Այստեղ կերպարները որոնումների ու անվերջ շարժման մեջ են: Հերոսներից մեկը՝ Մարգալիտան, հիշեցնում է տազնապների դառնությունը, ռուսաց լեզվի դասատու Արսյոյոմ Փորթուգալով-Ռոտինյանցը հաճախ էր ընկնում տազնապների մեջ». «...տազնապը հասունանում-հասունանում էր նրա մեջ, դեռ ուղեղում էր շարժվում, հետո անցնում էրակներով, ապա մտնում ոսկորները, ահագնանում ու միմյանց զարնում խեղձի մարմնում եղած-չեղածը...» [22]: Տարբեր վայրերից մարդիկ իրենց տազնապներով գալիս էին տեր Մինասի մոտ, բարձրանում Սուրբ Կարապետ եկեղեցին: Բայց ինքը՝ տեր Մինասը, նույնպես տազնապների

մեջ էր, ու այդ տագնապները նրան հանգիստ չէին տալիս: Իսկ «Մարգալիտան առաջին անգամ է տեսնում, որ տղամարդը կարող է իրենից ոչինչ չպահանջել և այսքան անհասկանալի ու անձանոթ մեղքերի մեջ խոստովանել» [23]:

«Եվ բանն մարմին եղև» պատմվածքը սկսվում է «օրենքով և երկրնքով դաշն կնքած» ամուսինների՝ Ագապիի ու Յագորի լուռ, անխոս, իրենց մտքերի մեջ ապրող կյանքի նկարագրությամբ: Կրկին հանդիպում ենք անխոս, լուռ, բայց ուղղորդող կնոջ կերպարի, որի խոսքերը չեն արտաբերվում, հավաքվում են ատամների ետևում: Ագապին նայում է ամուսնուն ոչնչացնող հայացքով: Նա հասկանում է, որ եթե ամուսինը գինի է բերել հետը, ուրեմն «անձնահարված է ուզում ներկայացնել իրեն այսօր»: Դարձյալ նորարարություն, հարուստ բառապաշար, որոնց շնորհիվ հեղինակը իրավիճակը ներկայացնում է:

«Ագապիի քարացած ծոծրակն էր հաղորդակցվում ամուսնու դեմուղիղ երեսի փշակերպության հետ... Անցնում էր ժամանակը, և լռությունը դաջված էր մելամաղձի մելամաղձի վրա» [24]: Նրանց օրն սկսվում է լռությամբ, ընթանում իր սովորական հունով: Ագապին գիտեր, թե ամեն մի վայրկյանին ինչն է հաջորդում, քանզի միապաղաղ ու նույնօրինակ օրերտ կրկնվում էին: Ամուսնու «պղտորությունը» նույնպես սովորական էր: Մելամաղձը պարուրում է անգամ մահճակալը, որից փորձում էր փախչել Ագապին...

Այվազյանի փոքր արձակը հարուստ է լեզվաոճական բարձր արվեստով: Չկա մի պատմվածք, որտեղ ընդգրկված չլինեն գեղարվեստական ոճին բնորոշ առանձնահատկությունները: «Գեղարվեստական ոճի կարևորագույն հատկանիշը մտածողությունն է, խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը, որոնք ստեղծվում են լեզվի պատկերավորության ու արտահայտչական բազմաթիվ միջոցներով ու ոճական հնարանքներով» [25]: Այս ամենը իր արտացոլումն է գտել Այվազյանի փոքր արձակում: «Ործկոց», «Խենթերի զրույցը լեռան վրա», «Սովորական մարդու գինը», «Ապագան ետևում», «Շշուկ», «Ուտավորը», «Մատանայի օգնությունը», «Մեռնելուց մեռնել», «Ձուկը սափորում» և

այլ պատմվածքներ նույնպես գրված են Այվազյանական նորարար լեզվի բարձր արվեստով, հարուստ ու ինքնատիպ բառապաշարով: Նրա լեզուն հարուստ է հարցական, բացականչական, պատմողական բնույթի նախադասություններով: Առանձնանում է հատկապես կերպարների խոսքի ոճավորումը, որով էլ ընդգծվում է նրանց անհատականությունը: Իսկ համեմատություններն ու նորաստեղծ բառերը Այվազյան արձակագրին դարձնում են անկրկնելի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Փաշայան Ա.* Աղասի Այվազյանի հիշատակին, Գրական թերթ, 2020թ.:
2. *Ա. Այվազյան*, Ընտիր երկեր, Եր., 1987թ., էջ 345:
3. Նույն տեղում, էջ 344:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում, էջ 357:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում, էջ 358:
8. Նույն տեղում, էջ 369:
9. Նույն տեղում, էջ 408:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում, էջ 410:
12. Նույն տեղում, էջ 343:
13. Նույն տեղում, էջ 298:
14. Նույն տեղում, էջ 298, 301:
15. Նույն տեղում, էջ 310:
16. Նույն տեղում, էջ 320:
17. Նույն տեղում, էջ 516:
18. Նույն տեղում, էջ 419:
19. Նույն տեղում, էջ 434:
20. Նույն տեղում, էջ 362:
21. Նույն տեղում, էջ 369:
22. Նույն տեղում, էջ 371:
23. Նույն տեղում, էջ 374:
24. Նույն տեղում, էջ 472:
25. *Եզեկյան Լ.* Ոճագիտության ուղեցույց, Եր., 2007, էջ 41:

**ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ КРАТКОЙ  
ПРОЗЫ АГАСИ АЙВАЗЯНА***К.Ж. Саакян***АННОТАЦИЯ**

Краткая проза Агаси Айвазяна имеет языковые и стилистические особенности, которые еще больше обогащают творчество талантливого прозаика. Новаторский язык с его высоким искусством, богатой и оригинальной лексикой делает слова и изречения автора доступными для читателя. Особенно интересна стилизация слов персонажей, за счет чего подчеркивается их индивидуальность.

**Ключевые слова:** краткая проза, новаторство, стилистика, герои, повтор, преувеличение, поиск, особенность, психологический.

**LINGUISTIC FEATURES OF AGHASI  
AIVAZYAN'S SHORT PROSE***K. Sahakyan***ABSTRACT**

Aghasi Ayvazyan's short prose has linguistic and stylistic features, which further enrich the work of the talented prose writer. The innovative language with its high art, rich and original vocabulary makes the author's words and sayings available to the reader. The stylization of the characters' words is especially interesting, due to which their individuality is emphasized.

**Keywords:** short prose, innovative, stylistic, heroes, repetition, exaggeration, search, feature, psychological.

DOI 10.48200/1829-0450\_sh\_2022\_4\_175  
 УДК 159.9

Поступила: 11.09.2022г.  
 Сдана на рецензию: 13.09.2022г.  
 Подписана к печати: 24.10.2022г.

## ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Մ.Հ. Տոնոյան*

*Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարան  
 tonoyan.seda@rau.am*

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հայ անվանի գրող Հրանտ Մաթևոսյանը, իր հզոր գրականությանը զուգահեռ, իր յուրօրինակ ձևակերպումներով և ինքնատիպ մտածողությամբ ճշգրիտ և իմաստուն գնահատական տվեց հայ ազգի էքզիստենցիալ և էքզիստենցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրներին:

Հայ ազգի գոյության կարևորագույն բաղադրիչները գրողը համարում է լեզուն, կրոնը, գրականությունը, մշակույթը, ազգային-պատմական հիշողությունը, դարավոր ավանդույթները: Առանց այս ամենի հայ ազգը չէր կարող դիմակայել անվերջանալի հալածանքներին ու ջարդերին, Ցեղասպանության աղետին ու հայրենագրկմանը:

Հայ ազգի գոյությունը պահպանելու համար Մաթևոսյանը հորդորում է լսել Կոմիտասի երաժշտությունը, կարդալ հայ բանաստեղծների ստեղծագործությունները, հայացք նետել Սուրբ Հովհաննիսյանի եկեղեցուն: Այս ամենն ընկած է հայ ազգի փրկության հիամքում, ինչպես նաև հայ մնալու և աշխարհում մեր տեղն ունենալու կարևորագույն նախապայմանն է:

**Հիմնաբառեր՝** Հր. Մաթևոսյան, Հայրենիք, հայ ժողովուրդ, Հայաստան, գոյաբանական խնդիրներ, լեզու, կրոն, գրականություն, մշակույթ, ազգային-պատմական հիշողություն, ազգային ավանդույթներ, գլոբալացում, պատմություն, լավատեսություն, լույս:

Քսաներորդ դարի երկրորդ կեսը հայ իրականության մեջ նշանավորվեց Հրանտ Մաթևոսյանի հայտնությամբ. գրող, ով կարողացավ որոշակիորեն ազատագրել շղթայված միտքը, կոտրել կաղապարները, քննել արգելանքի տակ գտնվող գաղափարները՝ լինելով ազատախոհ և ոչ այլախոհ:

Ի սկզբանե մեծ աղմուկ կար նրա անվան շուրջը, սակայն Մովսեսի նման Մաթևոսյանն էլ բարձրացավ Աստծո լեռը, տարավ այդ վայրի աղմուկը և բերեց իր գրականությունը՝ հզոր, ինքնատիպ, բերեց մեր նորօրյա Գիրք ճանապարհին՝ հայ ժողովրդի կտակարաններից մեկը: Նա դարձավ հայրենի հողի բազում կանչվածներից և սակավ ընտրյալներից մեկը: «Ուզում էի հայոց երկրի համար Ավետարան գրել: Վախենամ, որ առանց ինձ կմնաք անտեր, հովվին կորցրած ոչխարի հոտ, որին գայլը կուտի» [1]:

Մաթևոսյանը շարունակեց լրացնել այդ Ավետարանը որպես նորօրյա մարգարե, Ավետարան, որի բազմաթիվ էջեր արդեն գրել էին Խորենացին, մեր վիպասքի անանուն հեղինակները, Աբովյանը, Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը, Չարենցը... Մաթևոսյանը տվեց մեր գոյաբանության և գոյափիլիսոփայության բազմաթիվ կնճռոտ հարցերի պատասխանները, արեց մարգարեական կռահումներ, որոնք դարձան նրա Լեռան քարոզը:

Գրողը հայտնաբերեց նաև «Ծմակուտ» կոչվող բարոյական միավորը, իր հայրենի Ահնիձորը՝ հայ մարդուն և հայ գյուղացուն բնորոշ խղճով ու իմաստնությամբ, համամարդկային բարոյականության օրենսգրքով:

«Պատմությունը մեզ լլկել է, կողոպտել է, բայց դարձյալ մնացել ենք դեպի լույսը ձգտող ժողովուրդ», - գրում է Մաթևոսյանը: Այս բանաձևումը հայ ժողովրդի գենետիկ կողը և ճակատագիրը վերծանելու բանալիներից մեկն է: Մեր անվանադիր նախնու՝ Լույսի արքա Հայկի կողմից խավարի թագավոր Բելին սպանելու փաստը դարերի և հազարամյակների ընթացքում մեզ չներվեց: Չներվեցին նաև հայի քրիստոնեական հավատը և չձուլվելու կամքը: Խավարի կողմից Լույսի հետապնդումը և հալածանքը եղան մշտնջենական ու հարատև. անվերջ գողգոթաներ և



հարության հրաշքներ: «Հայ ազգի դարերի պատմությունը տիեզերքի ամենադաժան, զարհուրելի գիրքն է», - գրել է Ավ. Բասահկյանը [2]:

Մաթևոսյանը հիշատակում է Երեմիա մարգարեի մի հայտնի միտքը, որը նույնպես հատկանշական եղավ մեր ժողովրդի համար, «Ճաշակելով ճաշակեցի զսակավ մի մեղր և ահա մեռանիցիմ» [3]: Մեր պատմության, մեր գոյաբանության բոլորաշրջաններում, հիրավի, մեղրը եղավ չափազանց սակավ, մահն ու տառապանքը՝ առատ ու անվերջ: Գուցե այս ամենի գլխավոր պատճառներից մեկը նաև մեր կողմից պատմական պահը չհասկանալու, ճիշտ չգնահատելու, ապագան չտեսնելու անկարողությունն է, դյուրահավատությունը, նաև հայ իշխանների «անիմաստասեր վարքը» [4], անձնական շահը հայրենիքի շահից վեր դասելու ցավալի հակումը, հակասականությունը, նաև այն, որ մեր թշնամին եղավ ամենադաժանն ու անողորմը: Այս առումով ուշագրավ են Մ. Լյութերի, Վ. Հյուգոյի, Ֆ. Դոստոևսկու, Ջ. Բայրոնի, Կ. Մարքսի հնչեցրած գնահատականները թուրքերի մասին:

«Նրանք բոլորը՝ բարեկամներն ու թշնամիները, եթե իմ քարոտ լեռնաստանից չոր մի բլուր անգամ թշնամուն զցեմ, նրանք բոլորն ինձ դավաճան են կոչելու, և ոչ մի թաքստոցում ես չեմ գորելու թաքնվել նրանց արհամարհանքից, որովհետև չեմ գորելու թաքնվել ինքս ինձանից: Հաղթանակը, միայն հաղթանակն է ազատելու մեզ թշնամու, կողմնակիցների և մեր իսկ քամահրանքից: Պարտությունը անհայրենիք տնանկներ է դարձնելու մեր երեխաներին, մեզ նրանց սև անեծքին է արժանացնելու: Պարտությունը մեզ դարձնելու է արդարության դռներին տաղտկալի քարշ եկողներ, որոնց երբեմն գուցե և կարեկցում են, բայց երբեք՝ հարգում» [5]:

Ժամանակին քրիստոնյա Եվրոպան հանդես չբերեց միասնական կամք, և Եվրոպայի ու Փոքր Ասիայի մեծ թվով ժողովուրդներ հայտնվեցին թուրքական լծի տակ: Սակայն հետագայում նվաճված շատ երկրներ Ռուսաստանի և Եվրոպական հզոր երկրների աջակցությամբ կարողացան ազատագրվել: Միստիկական և իռացիոնալ մի խորհրդով մեզ չտրվեց «երկաթյա շերեփ», և հայերը, չխուսափելով թուրքական յաթաղանից, ցեղասպանվեցին իրենց իսկ պատմական Հայրենիքում:

Ջախջախիչ պարտությամբ տանուլ տրվեցին մեր վերջին ճակատամարտերը, և սերունդներ սնած ու ապրեցրած շքեղ երազներն ու տեսլականները մեր հայրենիքի և ժողովրդի ապագայի մասին վերածվեցին հրեշավոր ֆանտասմագորիայի, որն, ավաղ, իրականություն էր՝ տասը հազար քառ/կմ հայրենիք և յոթ հարյուր հազար որբ ու գաղթական:

«Քո բոլոր ճակատամարտերն այլևս տանուլ են տրված», - հետագայում կգրի Վիլյամ Մարտյանը: «Խաբված ժողովուրդ». այս բնորոշումը տվեց մեզ հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆ.Նանսենը: Թումանյանը գրեց հայ ժողովրդի ռեփլիեմը՝ հանճարեղ «Հոգեհանգիստը»: Տերյանը, մեր մյուս մեծերը նույնպես յուրովի անդրադարձան այդ սև թեմային.

Մենք բոլորս, բոլորս  
Մանուկներ ենք որբ,  
Մանուկներ ենք մենք կորած –  
Հավիտյան անմայր... [6]:

Սակայն դաշնակցական առաջնորդներին հաջողվեց ավերակների վրա ստեղծել Առաջին Հանրապետությունը՝ սովի, համաճարակների և թուրքի դեմ մաքառելով: Կերտվեց նաև Մարդարապատի հաղթանակը, որը վճռորոշ եղավ հայ ժողովրդի ներկայի և ապագայի համար:

Դաշնակցական ղեկավարությանը եկան փոխարինելու բոլշևիկները: Բարդ ու հակասական ժամանակներ էին հայ ժողովրդի համար, բախտորոշ ժամանակներ, երբ Գ.Նժդեհը հսկայական ջանքերի և անձնուրաց պայքարի գնով կարողացավ փրկել Լեռնահայաստանը:

Հ. Մաթևոսյանը գրում է. «Եվ փառք ոգևորված այն սերնդին, որ Արարիչ Աստծո նման ի չգոյե ստեղծեց մեզ համար Հայրենիք: Դա Մյասնիկյանի, Թումանյանի, Չարենցի, Մարյանի, Թորամանյանի, Թամանյանի սերունդն էր, մատյան մի փառահեղ գունդ, որ մարտի նետվեց մեզ համար ամենաողբերգական պահերին, երբ կարող էինք կորցնել ազգ և երկիր լինելու վերջին հնարավորությունը» [7]:

Սակայն Խորհրդային կայսրության փլուզումից հետո մենք անկախություն ստացանք, երբ ոչ հոգով էինք ազատ, ոչ մտքով, և պատրաստ

չէին նաև մեր առաջնորդները՝ ունենալ ինքնիշխան պետություն և ազատ Հայրենիք: Այս առումով տեղին է հիշել մի կարևոր և ուսանելի փաստ. դուրս բերելով իր ժողովրդին եգիպտական գերությունից՝ Մովսեսը քառասուն տարի նրան թողեց անապատում, որպեսզի Ավետյաց երկիր մտնեն հոգով և մտքով ազատ մարդիկ, այլ ոչ գերության սոխն ու սխտորը կարոտով հիշող նախկին ստրուկներ՝ իրենց արատներով և ստրուկի մտահոգեկերպով:

Մարդաբանական և մշակութաբանական մի քանի դարաշրջան ապրած հայ ժողովրդի համար ազգային-մշակութային, բարոյաէթիկական և գեղագիտական համակարգերի պահպանումն ու զարգացումը եղել է ազգապահպան և ուղենշային գաղափար: Մեր նախնիների աշխարհայացքային ճիշտ կողմնորոշումն ու անսխալ բնագղը, հեռանկարի հանճարեղ կոահումները կատարեցին ազգափրկիչ դեր: Մշակույթը ժողովրդի հարատևման գաղափարն է, ժողովրդի ոգին, ժողովրդի ոգու սլացքը դարերի ու երկրների վրա: «Այն ժառանգության մեջ, որ թողել է Հին Հայաստանը այսօրվա հայերին, ինձ առավել գրավում է մշակութային մասը: Մեր մշակութային ժառանգությունը վկայում է, որ ցանկացածի հետ համեմատվելու ուժը կա մեր մեջ, և կարծում եմ՝ անգնահատելի ժառանգությունը ոչ միայն ազգային հարստություն է, այլև ազգային ինքնափրկություն ծանրագույն փորձությունների պահին» [8]:

Մեծանուն հայագետ, համաշխարհային մշակույթի փայլուն գիտակ Ն.Մառը այսպիսի գնահատական է տվել հայ ժողովրդի մշակույթին. «Հարևան և մինչև անգամ հեռու ընկած ազգերից ո՞րն է, որ օգտված չլիներ հայոց ազգի կուլտուրական բարեմասնություններից, վիպասաններից եկող և աշուղներին հասած երգերից, նրա ճարտարապետական աննման զարգացած արվեստից, նրա բացառիկ լեզվագիտական շնորհից, որ թարգմանչական արհեստից ավելի արվեստ է [9]»:

Դարերով պետականությունից զրկված, հզոր ժողովուրդների բախման խաչմերուկում հայտնված հայ ժողովրդի համար գոյաբանական հենասյուներ եղան նրա լեզուն, գրականությունը, կրոնը, մշակույթը, ազգային ավանդույթները, նաև հայ կնոջ բացառիկ դերը ազգապահպանության գործում: Գոյաբանական այս արժեքները դարերով

փոխարինեցին մեր պետականությանը: Դարեր շարունակ հայ արվեստագետը, բանաստեղծն ու գրողը, նկարիչն ու երաժիշտը, մեր պատմիչներն ու վիպասքի անանուն ասացողները, Չարենցի խոսքերով՝ «ասեղնագործում էին գիշերվա խավարը»: Այդ խավարն անթափանց էր, զուրկ լույսի նշույլից, իսկ մեր մեծերը, չտրվելով անհուսությանը, տիեզերքի խավարում նշմարում էին լույսի շողը և կարողանում էին այն իջեցնել կեղեքված ու հոշոտված հայրենիք: Եթե չէին էլ նշմարում, մտքի և հոգու գերլարումով իրենք էին ստեղծում՝ ժողովրդին ապրեցնելու և աղետներին դիմակայելու համար:

Մաթևոսյանը բարձր է գնահատում Հայաստանում ստեղծված քրիստոնեական մշակույթը, քրիստոնեական միջնադարի, Աստվածաշնչի Լույսը, հոգևորականների փոքր ջոկատի ազգանվեր աշխատանքը, որ արվեց սերունդների մեջ հայության ոգին պահպանելու, ազգային-պատմական հիշողությունը վառ պահելու համար: Հաստատվում է ազգային Եսը հանուն դիմադրության, հանուն մեր մշակութային ինքնության, տիեզերքում սեփական տեղի: Գրողի համար կրոնի հարցը նույնպես մշակույթի հարց է: Նա գտնում է, որ «Կրոնի դասավանդումը դպրոցում նույնքան անհրաժեշտ է, ինչքան Մեսրոպյան այբուբենը՝ լեզուն իմանալու համար: Կրոնի իմացությունը կբացի դեպի համաշխարհային մշակույթ տանող դռները: Ավետարանը մարդկության մեծագույն գրական կոթողն է» [10]:

Մաթևոսյանն առանձնահատուկ վերաբերմունք ունի մեր լեզվի նկատմամբ: «Լեզուն, փաստացիորեն, ամենալրիվ հատընտիրն է ժողովրդի հիշողության, նրա անհատականության և բարոյականության... Ինձ համար ստեղծագործական ամենահզոր ազդակը հայոց լեզվի պոեզիան է: Եվ հենց այդ բանաստեղծական ամենակատարյալ համակարգերից մեկում, որ ստեղծվել է հայկական երկնքի ներքո, պետք է որոնել մեր բոլոր վերջերը և բոլոր սկիզբները այս տիեզերքում: Լեզուն ազգապահպանության գոյաբանական խնդիրը լուծելու կարևորագույն պայմանն է, որ պարտադրելու է հայ մշակույթ, հայ գրականություն և մշակույթի հայրենիք» [11]:

«Աստծուն հավասար արարիչ է գրականությունը, աշխարհի ազնվանալու տառապալից ճիգն է: Գրականությունը փնտրում է Աստծո մարդուն, փնտրում է մարդու անաղարտ վիճակը: Բանի աշխարհը թե եղավ՝ նյութի աշխարհը անպայման կլինի: Եթե ճշմարիտ է, որ քանակով մեծ ոչ քաղաքակիրթ ազգությունները երկարատևում են իրենց սովարությամբ, ապա նույնքան բացարձակ ճշմարտություն է, որ փոքր ազգերի միակ պահպանիչներն ուժացման այդ տիեզերական ցրտի դեմ նրանց ազգային արվեստի խոշոր անհատականություններն են: Նրանք փոքր ազգերի բախտավորությունն են: Թումանյանի գրականությունը մեր ժողովրդի բախտավորությունն է: Հայ գրականությունը մի քիչ այլ բան է եղել, քան ուրիշ երկրներիինը, այն, Աբովյանից սկսած, փոխարինել է պետականությանը: Մեր մշակույթի երկրորդ Ոսկեդարը մենք ունեցանք այս 200 տարվա ընթացքում: Նորից ծնվեցին Խորենացին էլ, Նարեկացին էլ, մեր հիշողությունն էլ, պատմությունն էլ: Գուցե մենք էլ և մեր ապագան» [12]:

Արհավիրքների, խավարի և հալածանքի մթնոլորտում հայ բանաստեղծը, հավատարիմ իր արարիչ ոգուն, աշխարհը ողողել է լույսով, հավատով ու հույսով՝ հաստատելով իր ազնվական էությունը, աշխարհին անչար ու պայծառ նայելու կարողությունը, իրական կյանքի դժոխքից ու դիվային կապանքներից գեղեցկության երագով, կատարյալի տենչով, դեպի տիեզերք տանող որոնումներով: Տառապանքի քառուղիներով անցնող ժողովրդի և նրա գրականության գերագույն արժանիքներից գլխավորը եղավ համամարդկային սիրո ոգին: Գողգոթայի ու հարության հրաշքներից բյուրեղացած և սարսափների միջով անցած ժողովրդի բանաստեղծները հորինում էին խաղաղության, արդարության ու ճշմարտության մասին գեղեցիկ երագներ. «Երբ որ ցորեն դառնա հանց ընկույզ մի, գարին դառնա հանց մասուր մի», «Աշխարհ քանդվի, մեկ էլ շինվի». հայ մարդու՝ գեղեցիկ և արդար աշխարհի մասին երագանքներն իրենց փայլն են տվել ողջ հայ գրականությանը:

Փոքր և վիրավոր հողի վրա մեր գրական հանճարները դարձան փրկություն՝ լուծելով ժողովրդի գոյաբանական խնդիրները: Նրանք են կրել մարդափրկության և հայ ժողովրդի փրկության խաչը՝ իրենք էլ

դառնալով այդ գաղափարի խայտալներ: Ընդվզելով մեր ճակատագրի և նույնիսկ Աստծո դեմ, չնայելով դառնությանն ու վիրավորանքին՝ Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը, Չարենցը պահպանում էին լույսը, սերը, երազներն ու խիղճը: Խնդագին զոհաբերումով, լույսի ու արարման երազներով նրանք մերձեցան մահվան և հարության առեղծվածին, ավելին, ճաշակեցին այն ցմրուր: «Թումանյանը հայրենիքի զոհասեղանին դրեց և՛ կյանքը, և՛ հանճարը: Թումանյանով մենք կանք, առանց Թումանյանի մենք չկանք: Տարագգի, տարալեզու գրականության մեծ աշխարհի մենք մտնում ենք Թումանյանով, և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է» [13]:

Միայն Թումանյանն էր, հայ բանաստեղծն էր, որ կարող էր տիեզերական ոճիրը ճաշակած իր ժողովրդին պատգամել՝ արևի նման նայել աշխարհին:

Ռուս հանճարեղ աստվածաբան-փիլիսոփա Բերդյասը համաշխարհային մշակույթի և բարոյական գիտակցության ճգնաժամի մասին ունի մի հետաքրքիր դիտարկում. «Բարոյականությունը որպես կանոնական, ընդհանուր, պարտադիր մշակութային արժեք ավերվել է, ինչպես մշակույթի բոլոր մյուս կանոնական արժեքները: Մշակույթին սպառնում է հիվանդության վտանգը: Այդ հիվանդությունը ժանտախտից էլ վատ է, դա անբարոյականությունն է» [14]:

Հազար տարի առաջ Գ.Նարեկացու տողերը կարծես գրվել են բարոյականության աղետալի վիճակը ներկայացնելու համար.

Մի մատյան եմ ես, մատյան շնչավոր,  
Ըստ Եզեկիելի տեսիլքի, բարդված ներսից ու դրսից  
Հառաչանքներով, ողբ ու վայերով,  
Քաղաք՝ անպատվար ու անմահարձան,  
Տուն՝ առանց ամուր դռնափակերի,  
Աղ՝ տեսքով միայն և ոչ թե համով [15]:

Հր. Մաթևոսյանը, դեռ տասնամյակներ առաջ, նկատի ունենալով մեր դաժան ճակատագրի բոլորաշրջանները, հարցնում է. «Ի՞նչը կա:

Մարդկային գու՞թը: Ու՞ր է այդ գուրը: Որտե՞ղ է այդ գուրը դարձել պաշտոնական կրոն և ստեղծել իր հասարակարգը: Ես էսօրվա իմ գրասեղանի գիրք եմ ուզում, ժամեր ունեմ, որ Թումանյանն էլ չի բավարարում, մի տեղ կա, որ Սուրբ Գիրքն էլ չի լցնում: Հոբի պատմությունը նորից կգրեի, էսօր Հոբի վիճակում եմք: Չէ, նորից չէի գրի, նորից կթարգմանեի» [16]: Ինչու՞ Հոբը, ինչու՞ հենց Հոբի գիրքը: Աշխարհում մի ժողովուրդ՝ հայ ժողովուրդը, անվերջ շրջափուլերով կրկնեց Հոբի՝ մարդկային հնարավորություններից դուրս տառապանքը: Ավ.Իսահակյանը նույնպես նմանություն է տեսել Հոբի և հայ ժողովրդի կյանքի ու ճակատագրի միջև: Եվ Հոբի նման հայ ժողովուրդը նույնպես չէր կորցնում իր հույսն ու հավատը՝ կրկնելով. «Կենդանի է իմ Տերը, և Նա ինձ ընկած չի թողնի» [17]:

Գրողը բացառիկ վերաբերմունք ունի նաև մեր էպոսի նկատմամբ. «Էպոսը մեր ժողովրդի կտակարանն է, այն ամենակարևորը և էականը, որ դարերի խորքից հասել է մեր ժողովրդին: «Սասունցի Դավիթը» ինչով էր տարբերվելու մյուս բոլոր-բոլոր էպոսներից: Աշխարհի ամենամարդկային էպոսներից մեր ամենամարդկայինը...» [18]:

Լինելով համատիեզերական և հավերժական արժեքների հավաքածու՝ էպոսը տալիս է մեր լինելիության, գոյաբանության և գոյափիլիսոփայության, հաջողությունների և ձախողումների, ազգային առեղծվածային ճակատագրի բոլոր կնճռոտ հարցերի պատասխանները: Ոչ մի տեքստում և մատյանում հայի նկարագիրը, հայի էությունն այնպես համապարփակ ներկայացված չէ, ինչպես էպոսում: Վիպասքում անանուն հեղինակների, իմաստուն պայծառատեսների կողմից հանձարեղորեն ներկայացված են մեր սկիզբը և վերջը, մեր գոյության և լինելիության խորհուրդը:

Հայ ժողովրդի գոյաբանության և գոյափիլիսոփայության տեսանկյունից շատ կարևոր և էական է Դավթի մի եզրահանգումը. «Իմ ցեց իմ անձից է». այս միտքը նաև հայ ժողովրդի ինքնագնահատականն է, մեր ձախողումների և ողբերգությունների գլխավոր պատճառներից մեկը: Հողը կակղած է Մհերի և նրա ձիու ոտքերի տակ, մարդիկ՝ «գաճաճ,

մանրացած և դալբ»: Հայ ժողովրդի բնավորության արատները, արժեհամակարգի խեղումները խոսում են հայի բարոյականության, նրա մտահոգեկերպի ճաքի ու խեղման մասին: Հայի այս տեսակի մասին ժամանակին դառնությամբ են գրել նաև Պատմահայրը իր հռչակավոր «Ողբում» և Գր.Նարեկացին «Մատյան ողբերգության» աղոթամատյանում: Հետագայում այս թեման բարձրացրեցին նաև Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ե. Չարենցը:

Հր.Մաթևոսյանը հաճախ է անդրադարձ կատարում հրեաներին, նրանց բացառիկ հայրենասիրությանը, ազգային և մարդկային որակներին: «Ես հույս ունեմ, որ ամեն ամեն հայ հասկանում է, որ ինքը ոչինչ է, եթե կամավոր չի պատկանում ազգային ընդհանրությանը: Ինչպես հրեաների համար Իսրայելը ապաստարան է, խորհրդանիշ, Հայաստանն էլ կպահպանվի որպես ապաստարան պատմության տարածքում» [19]:

Ի վերջո, հրեաները պատկանում են հրեական հավերժությանը, նրանց համար Սիոնը, Երուսաղեմը, Իսրայելը սրբազան անուններ են: Հայերը նույնպես ունեն իրենց խորհրդանիշերը: Նրանք հիմնականում չեն ձուլվում, բայց չեն էլ պատկանում ազգային ընդհանրությանն այնպես, ինչպես հրեաները:

Հր.Մաթևոսյանը կարևորում է նաև գլոբալացման կամ համաշխարհայնացման թեման՝ չթաքցնելով իր տազնապներն ու մտահոգությունները հայ ժողովրդի ազգային ինքնությանը և անվտանգությանը սպառնացող վտանգների նկատմամբ:

Քսաներորդ դարի վերջին տասնամյակներին բուռն թափով սկսվեց համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի գլոբալացման գործընթացը, որն իր հետ բերեց զանգվածային կամ սպառողական մշակույթ, դասական մշակույթի աննախադեպ անկում, հոգևոր և բարոյական սնանկություն, ժողովուրդների հոգեկերտվածքի և ազգային արժեհամակարգի քայքայում՝ տանելով ազգային-պատմական հիշողության, ազգային ավանդույթների և մշակույթի, նաև հավատի հիմքերի թուլացման և ոչնչացման:



Գլոբալիստական զանազան կենտրոններում մշակված և վարպետորեն քողարկված քաղաքականությունը, ըստ ամերիկյան գիտնական Ջ.Ռոբերտսի, իրականացվում է հատկապես երիտասարդության մտքի և սրտի միջոցով: Ավելին. Նոբելյան մրցանակի դափնեկիր, աշխարհահռչակ տնտեսագետ Ջոն Մոտիզլիցը իր «Արևմուտքի հաղթարշավը» աշխատությունում նշում է, որ գլոբալացման միջոցով հատկապես ծայրամասեր բերվեցին վնասակար երևույթներ և վտանգավոր գաղափարներ»:

Սակայն մարդկության զարգացման ընթացքը, քաղաքակրթությունների և մշակույթների պատմությունը ցույց են տալիս, որ յուրաքանչյուր ազգի բացառիկության գաղափարն ունի չափազանց ամուր գոյաբանական և մշակութաբանական հիմքեր: Մինչև օրս չի ստեղծվել աշխարհի ազգային պատկերին համարժեք մեկ այլ պատկեր, որ լինի այդքան կենսունակ և չունենա այլընտրանք: Մաթևոսյանն ունի ազգային ինքնափրկության մի բանաձևում. «Լսենք մեր երգը՝ Կոմիտասին, կարդանք հայ պոեզիան, հայացքներս հառենք Հռիփսիմեի տաճարին. նպատակը սերն է մարդու հանդեպ, մարդափրկությունը» [20]:

«Միայն պարապ ունկերը կլցվեին այսպես այլ ձայներով, զորաց ոտը կգնային միայն մտքից տկարները, միայն հոգով աղքատները կտրվեին այսպես այլ աստվածների: Մեծուփոքրով այսպիսի գերեվարման կգնար միայն անաստված ժողովուրդը: Սատանայի առաքյալների առաջ ինչ տարողունակ ավազան է հոգով աղքատ ժողովուրդը» [21]:

«Խորենացու ազգն ենք, այո՛, Հիսուսի ժողովուրդն ենք, այո՛: Ոսկեղենիկ հայերենի որդիներն ենք, այո՛: Բայց հավերժական փառքեր չկան... Իսկապես իմ գուրգուրած կերպարի գլխին, որից ես ջանում էի ձուլել իմ Աստծուն, փլուզումը եղավ, ուղղակի կայծակ ճայթեց, իմ մարդը դա էր, այդ մարդը ոչնչացվեց:

Եվ չտա Աստված, որ անարիներիս բացակայությունն այսօր, վաղը մեր ճակատագիրը վերծանելու հանձնի ոչ յուրայինների: Կար մի երկիր Հայաստան անուն: Նրա որդիներն անարի էին և մանավանդ աշխատել չէին սիրում և անազնիվ էին իրենց գործերի առջև, և նրանք կերան իրենց Հայրենիքը և այդպիսով իրենք իրենց կերան» [22]:

Դժվար է գտնել ավելի տարողունակ և խորհմաստ խոսք, որ լինի այդքան ցավով ու տագնապով առլեցուն: Այն հնչում է որպես զավակի ողբը վտանգի մեջ հայտնված հայրենի տան վրա, այսպես խոսում էին Իսրայելի մասին Աստվածաշնչյան մարգարեները՝ մոխիր լցնելով իրենց գլխին և ողբալով Հայրենիքի դաժան ճակատագիրը... Սակայն Հայաստանի ապագայի նկատմամբ Մաթևոսյանը լավատես է, ինչպես լավատես են ողջ հայ գրականությունը՝ Աբովյանը, Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը, Չարենցը, լավատես՝ նույնիսկ մեր կյանքի ամենամռայլ և անհույս օրերին:

«Տիեզերքի խավարը լի է ամայի հայրենիքների պարապ ժամանակներով, ձեռք ես մեկնում՝ բռնող չկա, ձայն ես տալիս՝ գնում կորչում է ձայնդ: Տուն ենք բարձրացնում, որ երևալու է աշխարհի բոլոր ծեղերից և բոլորիս հպարտությունն է լինելու, և նրա վառ կերոնները լույս են խփելու աշխարհի բոլոր անկյուններում ու սովերների մեջ հայորդի են փնտրելու, ազգային դեմք ու հպարտություն» [23]:

1933թ. Չարենցը գրեց իր «Պատմության քառուղիներով» պոեմը՝ հուսահատ և հոռետեսական մտքերով մեր ժողովրդի անցյալի, մեր ոչնչատեսիլ ներկայի մասին:

Պատմության քառուղիներում մենք քայլել ենք երկար՝  
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար... [24]:

Բանաստեղծը անսահման դառնությամբ է գրում նաև ողջ պատմության ընթացքում մեզ ուղեկցած սոված ու ողորմելի գայլի մասին, որի ոռնոցը միստիկական մի խորհրդով դարձել է հայ ժողովրդի հիմնը և տարածվել մեր պատմության վրա:

Չարենցն, այնուամենայնիվ, իր մեջ ուժ է գտել հույսի ու լավատեսության համար: Նա տեսել է Լույսի հաղթանակը: Մենք խոստման ժողովուրդ ենք: Հիսուսն ինքը խոստացավ, որ Երկնքի Արքայությունը հրեաներից կվերցվի և կտրվի Արևելքից ուրիշ ժողովրդի: Չարենցը հավատում է այդ խոստմանը և համոզված է, որ մենք պիտի լինենք այն հաստակող ուղտը, որ կանցնի ասեղի անցքով և կժառանգի ապագայի

դրախտը: Հավատանք այդ խոստմանը: Այլապես անհնար է, այլապես կխախտվի տիեզերական հավասարակշռությունը, Համաշխարհային Ներդաշնակության գաղափարը կդառնա անգո մի բան և երկրագունդը, ծիրից դուրս գալով, կթավալվի տիեզերքի խավարում՝ իր հետ թավալելով աշխարհում տիրող չարիքը, բռնությունն ու անարդարությունը մեր ժողովրդի և մեր Հայրենիքի նկատմամբ: Երկրագունդը երկար չի դիմանա տառապանքի և ոճիրների ծանրությանը:

Սակայն լավատես լինենք և մտածենք, որ աշխարհում դարձյալ կհաստատվի սրբազան Արարատի երկրի ժամանակը և հայ ժողովուրդը կվերադառնա ի վերուստ իրեն սահմանված տեղը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մաթևոսյան Հր.* Սպիտակ թղթի առջև, Հայագիտակ, Եր., 2004, էջ 231:
2. *Բսահակյան Ավ.* Աֆորիզմներ, Եր., «Տիգրան Մեծ», 2001, էջ 92:
3. Աստվածաշունչ, Մատեան Հին և Նոր կտակարաններ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, էջ 1772:
4. *Խորենացի Մ.* Հայոց պատմություն, Եր., «Էդիտ Պրինտ», 2014:
5. *Մաթևոսյան Հր.* «Ես ես եմ», Եր., «Ոսկան Երևանցի», 2005, էջ 300:
6. *Տերյան Վ.* Բանաստեղծությունների ժողովածու, Եր., «Էդիթ Պրինտ», 2011թ., էջ 39:
7. *Մաթևոսյան Հր.* «Ես ես եմ», Եր., «Ոսկան Երևանցի», 2005, էջ 122:
8. Նույն տեղում, էջ 91:
9. *Մառ Ն.* Հայկական մշակույթը, Եր., «Հայաստան», 1989, էջ 25:
10. *Մաթևոսյան Հր.* Սպիտակ թղթի առջև, Եր., «Հայագիտակ», 2004, էջ 19:
11. *Մաթևոսյան Հր.* «Ես ես եմ», Եր., «Ոսկան Երևանցի», 2005, էջ 376:
12. *Մաթևոսյան Հր.* Սպիտակ թղթի առջև, Եր., «Հայագիտակ», 2004, էջ 232:
13. *Մաթևոսյան Հր.* «Ես ես եմ», Եր., «Ոսկան Երևանցի», 2005, էջ 82:
14. *Бердяев Н.* Дух и реальность, М.: «Фоллио», 2003. С. 150.
15. *Նարեկյալ Վանից Գր.* Վանականի Մատեան ողբերգութեան, Եր., «Մուղնի», 2003, էջ 348:
16. *Մաթևոսյան Հր.* Սպիտակ թղթի առջև, Եր., «Հայագիտակ», 2004, էջ 321:
17. Աստվածաշունչ, Մատեան Հին և Նոր կտակարաններ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, էջ 968:
18. *Մաթևոսյան Հր.* Սպիտակ թղթի առջև, Եր., «Հայագիտակ», 2004, էջ 89:
19. Նույն տեղում, էջ 165:

20. *Մաթևոսյան Հր.* «Ես ես եմ», Եր., «Ոսկան Երևանցի», 2005, էջ 285:
21. Նույն տեղում, էջ 182:
22. Նույն տեղում, էջ 176:
23. Նույն տեղում, էջ 194:
24. *Չարենց Եղ.* Երկերի ժողովածու, Եր., «Հայաստան» հրատ., 2004, էջ 32:

**ГРАНТ МАТЕВОСЯН  
ОБ ОНТОЛОГИЧЕСКИХ ПРОБЛЕМАХ  
АРМЯНСКОГО НАРОДА**

*С.О. Тоноян*

**АННОТАЦИЯ**

Известный писатель Грант Матевосян не только обогатил и поднял на новую высоту армянскую литературу, но и, будучи свободомыслящим интеллектуалом, посредством своей публицистики осветил множество сложных вопросов и запрещенных идей. Матевосяну максимально правдиво и мудро удалось также раскрыть сущность и философию спорных и сложных экзистенциальных проблем. «История армянского народа – жесточайшая книга вселенной». Эту мысль великого поэта Ав. Исаакяна продолжил и Г. Матевосян. Испокон веков нас сопровождали бесконечные погромы, резня и гонения на своей же исторической Родине, апогеем которых стал Геноцид армянского народа. Для народа, веками находящегося под игом сильных народов и стран, экзистенциальные проблемы и вопросы самосохранения – язык, религия, культурные и нравственные ценности, историческая память, народные традиции – заменяли государства и государственность, сыграв огромную роль в выживании и консолидации нации.

Для удачного решения экзистенциально важных проблем Матевосян предостерегает свой народ от опасных и разрушительных, особенно для малочисленных народов, влияний и идей глобализации. Он призывает молодежь относиться к этим идеям крайне осторожно и выборочно.

Иначе малочисленным народам угрожает опасность ассимиляции и исчезновения. Ради сохранения нашего национального духа и заветных ценностей Матевосян советует побольше читать армянскую поэзию, чаще слушать музыку Комитаса, наслаждаться знаменитым собором Св. Рипсима. Писатель призывает ценой максимальных усилий сохранить нашу

национальную идентичность, наши цивилизационные ценности ради укоренения своего места на Земле в качестве носителей древней Араратской страны и библейского народа.

**Ключевые слова:** Гр. Матевосян, Родина, армянский народ, Армения, онтологические проблемы, язык, религия, литература, культура, национально-историческая память, национальные традиции, глобализация, история, оптимизм, свет.

**HRANT MATEVOSYAN ABOUT  
THE ONTOLOGICAL PROBLEMS OF THE ARMENIANS**

*S. Tonoyan*

**ABSTRACT**

Renowned Armenian writer Hrant Matevosyan, in parallel with his powerful literature, gave the accurate and wise evaluation of the existential and existential-philosophical issues of the Armenian nation through his publicism, with his distinctive phrasing and unique thinking.

The writer considers the language, religion, literature, culture, the national-historical memory, and centuries-old traditions the most significant components of existence of the Armenian nation. Without all this the Armenian nation could not confront the endless persecutions and massacres, the calamity of the Genocide and deprivation of the homeland.

Matevosyan has also given the perfect principle of the existence of the Armenian nation, urging to listen to Komitas' music, read the works of Armenian poets, and gaze at St. Hripsime Church. The aim is the salvation of the Armenian nation, as well as the most important precondition of staying Armenian and having our place in the world.

**Keywords:** H. Matevosyan, Motherland, Armenians, Armenia, ontological problems, language, religion, literature, culture, national-historical memory, national traditions, globalization, history, optimism, light.

## СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

**Аветисян П.С.** – д.филос.н., к.физ.-мат.н., профессор, проректор по научной части Российско-Армянского (Славянского) Университета

**Аветисян Д.П.** – магистрант Института права и политики Российско-Армянского (Славянского) Университета по направлению «Юриспруденция»

**Амбарцумян А.М.** – аспирант Ереванского государственного университета, социолог Национального центра образовательных технологий

**Арутюнян Г.М.** – аспирант Ереванского государственного университета, социолог Национального центра образовательных технологий

**Войкова Н.А.** – к.ю.н., доцент Кафедры правоведения и практической юриспруденции Российской академии народного хозяйства при Президенте РФ

**Галикян Г.Э.** – к.филос.н., доцент, заведующий Кафедрой философии Российско-Армянского (Славянского) университета

**Геворкян Н.М.** – к.э.н., ст. научный сотрудник, помощник Проректора по науке Российско-Армянского (Славянского) университета

**Заславская М.И.** – д.соц.н., профессор Кафедры прикладной социологии Ереванского государственного университета

**Захарова И.А.** – ассистент Кафедры общей психологии и психологии развития ФКПСР ФГАОУ ВО РНИМУ им. Н. И. Пирогова, медицинский психолог РГНКЦ им. Н. И. Пирогова

**Ильина О.Ю.** – д.ю.н., профессор, декан юридического факультета ФГБОУ ВО «Тверской государственный университет»

**Колобакина И.С.** – магистр по направлению «Психология», психолог-консультант, Российский государственный гуманитарный университет

**Кригер Е.Э.** – д.психол.н., заведующая Кафедрой психологии и педагогики образования Российского государственного гуманитарного университета

**Манукян И.К.** – аспирант, преподаватель Кафедры управления и бизнеса Российско-Армянского (Славянского) университета

**Меликян В.Г.** – д.и.н., профессор, заведующий Кафедрой общественных наук ЕГМУ им. М. Гераци, ведущий научный сотрудник Института истории НАН РА

**Никишина В.Б.** – д. псих. н., профессор, декан Факультета клинической психологии и социальной работы ФГАОУ ВО РНИМУ им. Н.И. Пирогова

**Оганесян Т.А.** – к.филос.н., преподаватель Кафедры философии Российско-Армянского (Славянского) Университета

**Орестова В.Р.** – д.психол.н., доцент, заведующая Кафедрой психологии личности Российского государственного гуманитарного университета

**Петраш Е.А.** – д. псих. н., доцент, заместитель декана Факультета клинической психологии и социальной работы ФГАОУ ВО РНИМУ им. Н.И. Пирогова

**Саакян К.Ж.** – к.филол.н., и.о. доцента Кафедры армянского языка и литературы Российско-Армянского (Славянского) университета

**Тадевоян М.Р.** – к.филол.н., главный специалист по планированию, организации и сопровождению НИР, преподаватель Кафедры журналистики Российско-Армянского (Славянского) университета

**Тамарян Дж. Т.** – аспирант Института истории Национальной академии наук РА

**Тоноян С.О.** – к.филол.н., доцент Кафедры армянского языка и литературы Российско-Армянского (Славянского) университета

Вестник Российско-Армянского университета. Серия: гуманитарные  
и общественные науки, №4 (43) 2022г.

*Главный редактор РНИ – М.Э. Авакян*  
*Корректоры – А.С. Есяян, М.С. Есяян*  
*Компьютерная верстка – А.С. Бжикян*

Адрес Редакции научных изданий Российско-Армянского университета:  
*0051, г. Ереван, ул. Овсена Эмина, 123*  
*тел./факс: (+374 10) 27-70-52, (внутр. 42-02)*  
*e-mail: maria.avakian@rau.am*

Заказ № 32

Подписано к печати 21.07.2022г.

Формат 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>. Бумага офсетная № 1.

Объем усл. 12,1 п.л. Тираж 100 экз.